


ԳԵՏՐՈՍ ՍԻՄՈՆԵԱՆ

ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ԶՄԻՌՆԻԱՆ



Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի Թ Ն Ի Ո Յ Ե Ի Շ Ր Զ Ա Ն Ն Ե Ր Ո Ւ Հ Ա Յ Ր Ե Ն Ա Կ Յ Ա Կ Ա Ն Վ Ե Ր Ա Շ Ի Ն Ա Ց Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

UNION DES COMPATRIOTES ARMÉNIENS DE SMYRNE ET DES ENVIRONS

Տպարան «Արաբս» - Փարիզ

1936

9(47.925)

Ս-50

ԶՄԻՒՆԻՈՅ ԵՒ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ  
ՀԱՅՐ . ՎԵՐԱՇԻՆԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ

UNION DES COMPATRIOTES ARMÉNIENS  
DE SMYRNE ET DES ENVIRONS

9bis rue Madame Curie

BAGNEUX (Seine)

France

Յարգելի Տ...

Ներկայ ՅՈՒՇԱՄԱՍԵԱՆՆԸ, — որան պարաստութիւն ու երասարակութիւնը կատարում են *ամենամանր պայմաններու տակ*, — կը հետապնդէ համեմտ, բայց ամէն Զմիւռնակալու համար նուիրական նպատակ մը — ընդհանուր սակայն էական գծերով տալ պատկերը Զմիւռնիոյ փառայեղ անցեալին եւ, անոր յգիշխումին ու պանծացումին համար, համայն Զմիւռնակալութեան բոլոր խաւերուն սեփականութիւնը դարձնել «ՆՈՐ ԶՄԻՒՆԻՈՅ»-ն եւ չայստանի մէջ կառուցանելու վսեմ գաղափարը:

Կապույտ ենք որ իւրաքանչիւր Զմիւռնակալ, խորապէս գիտակցելով այս պատուաբեր ձեռնարկին երատայ անհրաժեշտութեան, պիտի չզղանայ իր նիւթական եւ բարոյական անվերապահ աջակցութիւնը այն *ընդհանուր հանգանակութեան*, որ պիտի կազմակերպուի Միութեան կողմէ առաջադրուած նպատակին իրականացման համար:

ԿԵՂՐ . ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Փարիզ, 25 Ապրիլ 1936

ՄԻՈՒՆԻՈՅ  
INS



2



5 OCT 2011

9(47.925)

U-50

9(47.925)

U-50

ՊԵՏՐՈՍ ՍԻՄՈՆԵԱՆ


5 OCT 2011



ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ԶՄԻՒՆԻԱՆ



ԶՄԻՒՆԻԱՆ ԾՈՎԱՆՈՐՇԸ

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ն  
ԶՄԻՒՆԻԱՆ ԵՒ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱՇԻՆԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ  
UNION DES COMPATRIOTES ARMÉNIENS DE SMYRNE ET DES ENVIRONS

Տպարան «Արաբս» - Փարիզ  
1936

# ՆՈՐ ԶՄԻՒՌՆԻԱՆ ԽՈՐՀ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Զմիւռնիոյ եւ Շրջաններու Հայրենակցական Վերաշինաց Միութեան Կեդր. Վարչութիւնը ուրախութեամբ ստացաւ Նարին Սրբազնութիւն, Երուսաղէմի Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Արքեպիսկ. Գուշակեանէ հետեւ-



Եւլ քաջալերիչ եւ շնորհաւորական գրութիւնը 2 Նոյ. 1935 թըւականով, որու լուսանկարեալ պատկէնը պատշաճ թուեցաւ մեզ հրատարակել, առ ի գիտութիւն արտասահմանի ընդհանուր Զմիւռնահայութեան:

Ամեն. Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐԳ. ԳՈՒՇԱԿԵԱՆ

ԱՐՈՒ  
ԱՐՄԵՆԻԱԿԱՆ  
ՍՐՈՑԵ ԶԱԿԵՎՐԵԱՆՆԵ  
ՍՐՈՒՄԱՂԷՄ  
ARMENIAN PATRIARCHATE  
JERUSALEM

2 Նոյեմբեր 19 35

ԽԵ 4785-3

Պատ. Կեդրոնական Վարչութիւն  
Զմիւռնիոյ եւ Շրջ. Հայրենակցական եւ  
Վերաշինաց Միութեան

Ի Ա Ա Ր Ի Ձ

Պատիւ ըրած էիք ինձ, Ձեր Հոկտեմբեր 23 թուակիրով իմացընելով Պատ. Հայրենակցական Միութեան ղառադրած Նպատակը՝ կառուցանելու . . ՆՈՐ ԶՄԻՒՐՆԻԱ . . անուն աւան մը, մեր վերաշինուող Սիրիլի Հայրենութիւն՝ Հայաստանի մէջ: Կը փափաքիմ մտածել թէ այդ զնկուցումն ինձի ընելու թերուած էք սիրովն ու յիշողութեամբը միայն Ձեր երբեմնի անմոռանալի Առաջնորդին՝ Հոգեւոր Յ. Եղիշէ Ս.Արքեպիսկոպոս Դուրեանի, իմ երջանկաշատակ ուսուցչիս եւ Նախորդիս, որուն Հոգին վստահ եմ թէ պիտի բերկրի արդարապէս՝ իր Նախկին Ժողովուրդին այս բարենկատ եւ Հայրենասիրական մտածումին եւ ձեռնարկութեան համար: Նայն այդ բերկրանքն է որ կը զգանք Նաեւ մենք ի լուր Ձեր այս ազնիւ դիտաւորութեան: Զմիւռնիոյ Հայութիւնը, թէեւ ինքնին զաղութ՝ արտասահման հաստատուած ի վաղուց, միշտ հոգւով ի հազարդութեան մտած է Մայր-Հայրենիքին հետ, եւ ազգասիրական զգացմամբք եւ զօրծովք Նշանաւոր հանդիսացած, երբ դեռ չէն ու պայծառ էր յոնիական փանց վրայ: Իր ծոցէն էր որ առաջին անգամ, շուրջ դար մը առաջ, իր հանճարեղ զաւակներէն Յովհաննէս Միրզայեան վանանդեցի մեծ Հայկաբան վարժապետ Քահանան Հայրենաշունչ հոգւով երգեց . . Արքեպիսկոպոս Հայաստանի, . . ն եւ . . յսկզբաբ Հայաստանի, . . Կոն էր որ հրատարակուեցաւ Հայ Մամուլի ամենէն պատուարեր



23581-59


Քերթնէն մին . . Արշալոյս Արարտեան, ը, իբրև ազգային արձնութեան մշտանու երկ-  
թոյթ . Հոն էր որ հրաշակառոյց Ս. Ստեփանոսի Տանարը երկար տարիներ հոգեւոր սնունդ  
շարքեց իր կամարներուն սակ խմբուած բարեպաշտ սիրտերուն . Հոն էր որ նուազեան  
Տան Նախանգը, Սիւնեաց աշխարհէն կանուխ փոխադրուած, այդ մարտի մթնոլորտին  
մէջ քննեցին այն բնիկն վրայ, որ օր մը Ազգին պիտի ընծայէր Մեծն Նուարըն եւ իր  
մեծահոգի որդին Պօղոս Նուարը . Հոն էր որ Մեսրոպեան Վարժարանի հովանիին սակ  
հայնցի հոգեւոյ գաստարակուեցաւ ազնուական սերունդ մը . Հոն էր վերջապէս որ Յէ-  
տէնան Տան՝ հրատարակչական, Մամուրեանի ուսուցչական եւ հրատարակչական, եւ Ոսկանի,  
Նուարեանի, Զիլինկիրեանի եւ Նմաններու գրական գործունէութեան եւ Սրբազանաց  
բարեսիրական գործունէութեան շնորհիւ բարգաւաճ աստիճանի մը հասաւ տեղւոյն ազգա-  
յին կեանքը :

Այսպիսի Պատուական Հասարակութեան մը զաւակները, որքան ալ անողոք  
բախտէն զարնուած եւ ցիրուցանուած, բնականաբար պիտի չկարենային կորսնցնել ի-  
րենց ազնուական նախնիքներէն ժառանգուած իրենց ազգային բարեմասնութիւնները :

Հոգեկան այդ գեղեցիկ վիճակն է ահաւաստի որ երեւան կուգայ այսօր Ձեր մէջ, Ձեր  
սիրտերուն վերուզդուելովը դէպի ցանկալի Հայրենիքը Հայութեան՝ Մայր-Հայաստան :

Կը խնդակցինք Ձեր այն ~~Ձեր~~ ճշմարտագէտ հայրենասիրական փափաքին  
եւ եռանդին համար, կ'օրհնենք Ձեր բարի նպատակը, եւ կը մաղթենք Ձեզ համար լիու-  
լի յաջողութիւն :

Ընդունեցէք եւ բոլոր Ձեր հայրենակից Սրբելեաց հաղորդեցէք հայրական  
սիրոյ ողջոյններս ի Սուրբ Սիոնէս, եւ քաջալերեցէք ընդ միշտ զիրար անվատ յարա-  
տեւութեամբ շարունակելու Ձեր ստանձնած պարտականութիւնները, որպէսզի Հինն Ձմիւռ-  
նիոյ սերունդը Նոր Ձմրուորոյ մէջ իրապէս ողջունէ Արարտեան Արշալոյսին առջեւ ճակ-  
նոր Հայաստանի ապագայ ոսկեղարը եւ անոր արփիական պայծառութիւնները :

Աղօթարար  
ՊԱՏՐԻԱՐԸ ԵՐՈՈՍՄԱՆԵՄԻ  


### Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

#### Հայրենակիցներ,

Որքան ցաւալի պիտի ըլլար չփրփել Ձմիւռնիոյ պատուաբեր հայ գաղութին անցեալը :  
Անցեալ մը՝ որուն արմատը փնտտելու է Արարատի ստորտը : Հայը բաւական ժամանակ  
Ասիոյ մէջ ման գալէ յետոյ, Իզմիրի մէջ՝ իբր՝ ծովեզերեայ եւ վաճառաշահ ֆաղափի՝ հիմը  
դրաւ Ձմիւռնահայ գաղութին : Հայկական պատմութեան համար այսպէս սկսելով նոր շրջան  
մը՝ որ Թրքահայ կեանքի մէջ կատարեց վնասական մեծ դեր :

Այսօր միեւնոյն հայութիւնն է որ կրկին, աշխարհի չորս ծագերուն վրայ ցիր ու ցան,  
մնայուն վայր մը կը փնտտէ, իր ինքնութիւնը, իր արժէքը ցոյց տալու : Բայց առօրեայ կեան-  
քի հագար ու մէկ պահանջքին հետ, օտար միջավայրը կը խափանէ իր մէջ ամէն ինչ : Ցաւ  
ի սիրտ Ձմիւռնահայութիւնը ոչ եւս է : Մօտաւորապէս վեց հարիւր տարիներ շարունակ  
Փոքր Ասիոյ տեղացի ազգերու կողմէն լուսաւորութեան և նարտարարութեան առաջնութեան  
մրցանիշը շահելէ վերջ, այսօր ամէն կողմէ մշտնջենական մահուան դատապարտուած՝ վե-  
րականգնելու ոչ մէկ յոյս կը ներշնչէ :

Ձմիւռնիոյ աղէտալի փլուզումը, իրապէս, վերջակէտն էր Փոքր Ասիոյ ֆաղափակիք-  
աշխարհին, եւ սկիզբ՝ 20րդ դարու անգոյն փրստոնէութեան, շահերու անկուշտ խաչա-  
ձեւումներուն . . . :

Բայց պատմութիւնը՝ դարերու հովուումներով, կը կրկնուի շարունակ : Հեռաւոր եւ փո-  
քորկալից անցեալէն կրկին աւերակ՝ հունէն չորցած ծառը 1920 Նոյ. 29էն ի վեր հիասքափ,  
բողբոջ ծիլեր կ'արձակէ, հայ ժողովուրդի վերակենդանացման եւ անոր բարօրութեան հա-  
մար :

Ուստի, ներկան, արձագանգը կ'ըլլայ հեռաւոր անցեալին, կրկին կը բուրբէ իր շուրջ  
շահագործուած, չարաչար խարուած հայութիւնը, ինքնաբերաբար գայն ընելով իր իսկ երկ-  
րին ու նորագոյն պատմութեան նշմարիտ ժառանգորդը :

\* \* \*

Ձմիւռնահայ գաղութին համար, 1922էն ի վեր, արտասահման ո՛չ մէկ ձեռնարկ ըրած  
էր Վերաշինաց Միութեան մը կազմութեան : Ընկերային, մտաւոր եւ տնտեսական արժէքնե-  
րու իր ինքնաբար վիճակը յանցանքի մը աւօթով պիտի համակէր զինք՝ ի տես անցեալի  
վարած իր փառայեղ գործունէութեան :

1934 Ապրիլ 25ին կազմուեցաւ ՉՄԻՒՌՆԻՈՅ ԵՒ ՇՐՋ. ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱՇԻՆԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ իրեն նպատակ ունենալով շինել և. Հայաստանի մէջ ՆՈՐ ՉՄԻՒՌՆԻԱն եւ ամէն կերպով աջակցիլ և. Հայաստան մեկնիլ ուզող հայրենակիցներուն: Անհրաժեշտ է անխտիր համագործակցիլ այս ծրագրին իրագործման եւ անոր գաղափարը տարածել բոլոր գաղութներու՝ համայն Զմիւռնահայութեան խաւերէն ներս: Մենք վստահ ենք անոր յաջողութեան: Միութիւն մը որ կը կազմուի իտէպէ մը խանդավառուած, չի կրնար ինքզինքը ժխտել առանց գինք խանդավառող իտէպը ժխտելու: Արդ՝ իտէպ եւ միութիւն մէկ եւ անբաժան են մեզ համար:

Ասկից շատ առաջ, Իզմիրցիին՝ բարեգործական մեծագոյն ձեռնարկներով վառ պահած էր հայ ոգին: Մեզի կը մնայ հիմա, այդ ոգիին իբրեւ արտայայտիչ Հին ՉՄԻՒՌՆԻԱն ևնրաստեղծ և. Հայաստանի մէջ ՆՈՐ ՉՄԻՒՌՆԻԱյի վերածել, նոր սերունդի ստեղծագործող հաւատով եւ իբրեւ երախտիքի տուրք՝ գարկ մը տալու համար այն բոլորի վերականգնման որ մերն է, մեր անցեալի փառայեղ յիշատակովը լեցուն:

Պ . Ս .



ԱՆԴԱՄԱԳՐՈՒԷ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԻԱՀԱՄՈՒՌ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՀԱՄԱՐ

# Յ Ո Ւ Շ Ա Մ Ա Տ Ե Ա Ն

## Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Չ Մ Ի Ւ Ռ Ն Ի Ա Ն

Ի՛նչ քաղաքներ կան որոնք երկար դարերու ընթացքին իրենց անունը անփոփոխ պահած ըլլան: Այդպիսի քաղաքներէն է Զմիւռնիան: Ստրաբոն եւ Հերոդոտոս կը յիշեն զայն այս անունով: Հիմնարկութեան թուականը անորոշ է, սակայն ըստ Հին պատմադիրներու վկայութեան 3000 տարուան հնութիւն մը ունի: Զմիւռնիա քաղաքը, աշխարհագրականօրէն, ասիական Թուրքիոյ արեւմտեան եզերքին վրայ գեղեցիկ նաւահանգիստ մըն է, Կ. Պոլսէն 436 քիլոմետր հեռուութեամբ: Կը գտնուի լայնութեան 38° - 25 հիւսիս, եւ երկայնութեան, արեւելք 24° - 38 աստիճաններուն վրայ, Բագնա լեռան ստորոտը: Բնակչութիւն՝ 350.000 նախապատեարդման չըջանին: Անուանի վաճառաշահ նաւահանգիստ: Բարեխառն կլիմայ, մինչեւ 18°, նուազագոյն — 4° եւ առաւելագոյն + 39° աստիճան:

Զմիւռնիա իր դիրքով եւ կարեւորութեամբ cosmopolite քաղաք մը եղած է դարերու ընթացքին: Յունական դրաւումէն առաջ մօտաւորապէս օտար ազգաբնակչութեան ընդհանուր թիւը կը հաշուուէր, Յոյն 45,000, հրեայ 16,000, հայ 18,000 եւ 6000 եւրոպացի եւլն:

Հին կը հրատարակուէին 20ի մօտ թերթեր եւ պարբերականներ, դանազան լեզուներով, հայերէն, յունարէն, թուրքերէն, ֆրանսերէն, անգլիերէն եւ սպաներէն (եխտիշ): Դարերու թաւալումով Զմիւռնիա ինկած է

դանազան ցեղերու տիրապետութեան ներքեւ: Նախապէս Յունական, յետոյ Հռոմէական, յաջորդաբար Մեծն Աղեքսանդրի եւ իր յաջորդներուն՝ Պողոմէոսեաններու օրով՝ Մակեդոնական, միջին դարուն՝ Բիւզանդական եւ վերջապէս 1419էն ի վեր Օսմանեան կայսրութեան առաջնակարգ քաղաքներէն մին եղած է Կ. Պոլսէն անմիջապէս յետոյ:

Զմիւռնիան Հոմերոսի ծննդավայրն է: Լամարթին Զմիւռնիան Արեւելքի աստղը կ'անուանէ եւ բանաստեղծութեանց մէջ յորջորջուած է Յոնիական ծովու Թազուհին:

Մինչեւ իսկ, Բիէք սը Լուբօ կ'ըսէ. — «Զմիւռնիոյ ծովախորշը աւելի սիրուն եւ գեղեցիկ է, քան Մարսիլիոյ, Ճենովայի եւ Նաբոլիի խորշերը:

(« La Méditerranée pittoresque »)  
«Քաղաքական յեղաշրջումներ եւ բնական աղէտներ 30 եւ աւելի դարերէ ի վեր ա'յնքան ցնցած ու վրդոված են «Արշիպելագոսի թաղուհին» կոչուող այս ոստանը որ՝ իր բոլոր հնութեանց յիշատակարանները կործանած եւ անհետ եղած են: Իսկ անոնք որ ժամանակին աւերիչ ձեռքերէն ազատուած ու մեղի հասած են՝ խիստ աննշան թիւ մը կը գագմեն: Ատոնցմէ նշանաւորներն են քաղաքին հարաւային կողմը բարձրացող Բագնա լեռան (Գատիֆէ քալէսի) շինութիւնները, — պարիսպներու, բերդերու, աշտարակներու, ստորերկրեայ սրահներու մնացորդներ, որոնք արձանագրութենէ եւ թուականէ դուրկ՝ Աղեքսանդրեան շէնքեր



ԲՆԻԿ ԶՄԻՌՆԻԱՅԻ

ՄԵԾԱՆՈՒՆ ՀԱՅ

ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

1825 - 1899

Անուանի պետական մարդ, դիւանագէտ եւ ելեւմտագէտ: Եգիպտոսի ազգային եւ պետական դատարանական բարեկարգութեան հայր: Փոխարքայի քարտուղար: Քսան տարեկանին՝ կ'արժանանայ Լուի-Ֆիլիպի պատուոյ լեգէոնի խաչին: Նախաձեռնող Եգիպտոսի երկաթուղիներու, վիեննայի եւ Պերլինի փոխարքայութեան գործակալ: Առողջապահական վարչութեանց գլուխ: Վաճառանցի (transite) եւ երկաթուղիներու տնօրէն: Ասետրական, հանրագուտ Շինութեանց, Արդարութեան եւ Խտիվութեան նախարարպետ: Անուանի Զրախարհին

(réservoir) հեղինակ, որ մեծ քոնիչ տուաւ երկրագործութեան: Հիմնադիր՝ ծովային «Խտիվի» ընկերութեան, ապա՝ անգլիական Khedivial Mail Line անուանով: - Իսկ 1864ին, Փարիզ՝ Սուէզի ջրանցքի ընկերութեան հետ բանակցութիւններու միջոցին, արժանացած՝ Նափալէոն Գ. կայսեր պատուոյ լեգէոնի հրամանատարութեան: Նուպար փաշայի սեփական գործերն են 1866 եւ 1867ի հրովարտակները, տալով Եգիպտոսի բացարձակ ինքնավարութիւն եւ «Խտիվ»ի տիտղոս փոխարքային: Մեծաւ Փարիզ՝ 1899 Յունուար 13ին:

են, Բելգանդական եւ վենետիկեան նորոգութիւններ եւ յաւելումներ ստացած: Իզմիրի ներքին ծովախորշին եղերքը կը գտնուի Հալֆա - փունար կոչուած վայր մը ուր կայ երկաթուղիի եւ հանրակառքի կայարան: Նշանաւոր է Հալֆա - փունարի առաջանը եւ ջուրի ընկերութեան գործարանը: Այս աւազանը՝ ուր կը թափի յարգահոս աղբիւր մը, պատմական վայր մը եղած է հին դարերէ ի վեր եւ կը կոչուի Անահիտի Աղբիւր (Bain de Diane), անշուշտ այս գիցուելոյն չքնազ տաճարն ու խորհրդաստուեր լողարանները պարփակելու համար:

Ժ. եւ ԺԸ. դարերու ուղեւորներ, Սպոն (1869), Թուրնթօր (1700), Պօքօր ((1742), - Անահիտի այս բաղնիքին շուրջ գտած ու նկարագրած են Հնութեանց հարուստ դերուկներ որոնցմէ, ըստ վկայութեան, դուրս հանուած են Անահիտի արձանը, Աստղիկի պուլին եւ ուրիշ շատ արժէքաւոր քանդակներ: Ս. Ստեփանոս եկեղեցւոյն կից՝ հին դերեզմանատան որմերուն մէջ գետեղուած են քանի մը բարձր քանդակներ, որոնք մեր թուականին Բ. Գ. եւ Դ. դարերէն մարդիկներ կը ներկայացնեն:

Զմիւռնիոյ Յունաց մատենագրանը եւ

Հնութեանց թանգարանը որ ամբողջ Ասիական Թուրքիոյ մէջ եղական էր իր պարունակած առարկաներուն ճոխութեան եւ այլազանութեան կողմէ:

Հնութիւնները մեծ մասամբ կը վերաբերին Աղեքսանդրական եւ Հռոմէական շրջաններուն: Թանգարանին կից մատենագրանը իր խիստ կանոնաւոր եւ հսկայական դարաններուն մէջ կը պարունակէր 32.000 հատոր տղեալ գիրք եւ 2000 կտոր ձեռագիրք:

\*\*\*

Որոշապէս յայտնի չէ թէ ստալին անդամ Իզմիրի հայ բնակչութիւնը ո՞ր թուականէն Մայր Երկրին հողն ու ջուրը լքելով եկեր հաստատուեր է:

Կը թուի թէ Հայեր՝ երեք տարբեր վիսաւոր ժամանակներու մէջ գաղթած են Զմիւռնիա: Առաջին գաղթը հաւանաբար տեղի ունեցած է 1380ի ժամանակները, երկրորդ անգամ 1610 թուականէն վերջ եւ երրորդ անգամ 1800ի վերջերը, նախճիրներու եւ աւերներու հետեւանք:

Այսպէս, ըստ B. Slaars ի կողմէ Etude de Smyrne ընդարձակ ծանօթագրութեան, որ Հ. Յակոբոս Ծ. Վարդապետ Քոսեան ալ բաւական զբաղած է իր «Հայք ի Զմիւռնիա եւ ի Շրջակայս» երկին մէջ, — իբր թէ՛ Հայեր՝ Զմիւռնիա հաստատուած ըլլան առաջին անգամ 14րդ դարուն Ռուբինեանց իշխանութեան անկումէն անմիջապէս վերջ:

30.000 հայ ընտանիքներ՝ կ'անցնին այս շրջանին Կիւրոս, Ռոդոս, Կրետէ, Զմիւռնիա եւ Իտալիա: Այս գաղթականութիւնը տեղի ունեցած ըլլալու է հինգ դար առաջ, Ռուբինեանց թագաւորութեան անկման միջոցին, 1375ին, երբ Լեւոն Զ. Եգիպտոս տարուեցաւ կալանաւոր եւ ապա՝ վախճանեցաւ Փարիզ, 1393ին:

Դժբաղդարար սակայն Կիլիկեան արձանագրութեամբ գերեզմանաքարեր Զմիւռնիոյ մէջ չեն գտնուած: Մինչդեռ Ս. Ստեփանոս տաճարի պարտէզին մէջ տապանաքարեր կը

վկայեն Արարատեան աշխարհէ գաղթող քաղաքացիներու բազմաթիւ անուններ:

Ամենէն համոզիչ ապացոյցը Զմիւռնիոյ հայ գաղութին ծագման՝ անոր դաւառարարբառին եւ Արարատեան հնչումներուն մէջ դրունուած նոյնութիւնն է. ինչպէս Բ տառը որ կը համապատասխանէ Պ-ի, Դ՝ Տ-ի եւ Ե՛՛-ի եւն:

Բ.րդ դանդուածային գաղթ մը տեղի ունեցած է դէպի Զմիւռնիա 17րդ դարուն, Շահ-Արբախի օրով: 25.000 հայ ընտանիքներ բռնի տարադրուած են 1604ին: Այս երկրորդ գաղթի միջոցին բազմաթիւ հայ ընտանիքներ աղամայ տարածուած են դէպի Սպահան, Շիրազ, Համատան, Աֆղանիստան եւ անկից մինչեւ արեւելեան Հնդկաստան, Չինաստան, Մալաքքա եւ Սումատրա: Ասոնցմէ բաւական ստուար մաս մը դէպի արեւմուտք անցնելով կը հաստատուին Զմիւռնիա եւ շրջակաները, մասնաւորաբար Էստէմիշ եւ Մանիսա:

Tavernier կը վկայէ որ 1631ին Զմիւռնիա, մօտ 8000 հայ կար, իսկ Chardin ճանապարհորդը Կ'ըսէ, իր Voyage en Perse et autre lieux d'Orient գրքին մէջ, (Edition L. Langlois, 1811) թէ 1672ին Զմիւռնիոյ մէջ Հոլանտական վաճառականութիւնը հայերուն ձեռքն էր:

Այս վկայութիւնները ապացոյց են՝ թէ հայեր երկար առեւել ի վեր հաստատուած էին Զմիւռնիա եւ վաճառականութեան մէջ կարեւոր դեր կը խաղային:

Մեծն Պետրոս հրամանագիր մը շնորհած էր Զմիւռնիացի Պետրոս Ապրոյին, որով կայսրը Ռուսաստանի դուռները կը բանար Թրքահայաց առջեւ եւ արտօնութիւն կուտար անոնց՝ իր երկիրը մտնելու:

Վաւերական յիշատակարաններ կը հաստատեն թէ հրամանագրին ստորագրութենէն տարի մը վերջ, 1718ին, Զմիւռնիայէն հայեր՝ մետաքսագործարան մը կը հիմնեն Աթաերխանի մէջ (Ռուսաստան) որով կերպասի ոտայնանակութիւն կը ստրվեցնեն նաեւ ոտներուն:

Ժամանակի ընթացքին Զմիւռնիա Եւրոպայի եւ Մայրագոյն ու Մերձաւոր Արեւելքի առեւ-



**ՊՕՂՈՍ ՊԷՅ ԵՌԻՍՈՒՖԵԱՆ**  
Ազգասէր - Բարեգործ  
**ՓՈՆԱՐԿԱՅ ԵԳԻՊՏՈՍԻ**  
1843

Երիտասարդ Նուպար 17 տարեկան Մեծ փոխարքայ Մէհեմեդ Ալիի ներկայանալէ առաջ, 2 տարի Պոզոս պէյ Եուսուֆի՝ Չմիւռնիացի սոյն նշանաւոր պետական մարդուն՝ անձնական քարտուղարը եղած է:

տուրի շտեմարանը ըլլալու կը կոչուի:

Հնդկաստանէն Չինաստան եւ Պարսկաստանի ներքին մասերէն կարաւաններ՝ կ'երթեւեկէին Կովկասի կեդրոն մէկ վայրը, ապրանքներ փոխանակելու համար Իզմիրէն ուղարկուած եւրոպական արտադրութիւններուն հետ:

Չմիւռնիոյ հայերը՝ ընդհանրապէս վաճառականներ եղած են եւ ուղղակի յարաբերութիւններ մշակած՝ Վենետիկի, Աւստրիոյ, Հոլանտայի, Մարսիլիոյ, Մանչեսթրի եւ Լոնտոնի առեւտրականներուն հետ: Անգլիական բամպակի ձեռարուեստը (manufacture) իրենց արուեստին գլխաւոր մասը կը կազմէր: Այդ շրջանին անգլիական եւ յունական վաճառականները չկարենալով մրցիլ հայերու հետ, դադարեցուցած են իրենց գործերը: 1914ի պատերազմէն առաջ Չմիւռնիոյ տարազգործութեան արուեստը ամբողջութեամբ, իսկ թուղի, աֆիոնի եւ ծխախոտի վաճառականութիւնը գրեթէ հայոց ձեռքն էր:

Չմիւռնիոյ մեծ վաճառականական հաստատութիւններէն Պալարճեան եղբարք, իրենց բարեհամբաւ ձեռնարկներով եւ ուշիմութեամբը աշխարհածանօթ գիրք մը գրուած են արտասահմանի մէջ: Պալարճեաններու առեւտրական գործունէութիւնը այժմ կը տարածուի աշխարհի ամէն կողմը, կեդրոն ունենալով Մանչեսթրը:

Չմիւռնիոյ հայերը, հակառակ իրենց Պասմահանէի մենաշնորհին բեկանման, կը շարունակեն Խազմայի շինութիւնը:

Չմիւռնիացի ազգայիններէն յայտնի հայ մը Պոլիս կ'երթայ եւ 1790ին Սուլթան Սելիմէն արտօնադիր մը ձեռք կը ձգէ (Ֆերման) Խազմայի գործարան մը (Պասմահանէ) հիմնելու համար:

Այդ արտօնադիրը տրուած էր պայմանաւ մը: Գետինը՝ որուն վրայ պիտի բարձրանար գործարանը, Պոլսոյ մզկիթներէն մէկուն «վազըֆ» պիտի ըլլար: Այնպէս որ, մինչեւ վերջին պահը իր գոյութեան, ամէն տարի որոշ գումար մը ան կը վճարէր մայրաքաղաքի կրօնական հաստատութեան: Ասոր փոխարէն գործարանը իր մենաշնորհէն օգտուելով, ապահոված պիտի ըլլար, Խազմաներուն բացարձակ եւ միակ արտադրութիւնը:

Հայը որ հիմնած էր այս գործարանը, ստացած էր իրեն եւ իր ժառանգորդներուն համար Խազմաները կնքելու (timbré) իրաւունքը եւ դանձելու մէկ գրուշ, իբրեւ կնքումի իրաւունք, 20 Խազմայի իւրաքանչիւր ծրարին համար:

Գործատան յաջողութիւնը տեւեց աւելի քան յիսուն տարի:

Դժբաղդարար սակայն, Յրանքօ - Անգլիական ընկերութիւն մը կ'ուզէ Պասմահանէն զնել եւ կայարանի վերածել: Այժմու Իզմիր - Գասապա գիծը: Պասմահանէին բոլոր հայ տէրերը միացած կ'որոշեն ներկայացուցիչ մը ուղարկել Պոլիս յանձին Աւագ օղլուի (Աւագեան) որպէսզի ներկայանալով Սուլթանին աղերսէր յետաձգուի այդ կայարանի շինութեան: Սակայն Սուլթանին արհա-

մարհանքէն ազդուած՝ Աւագ օղլու յուզումէն կը մեռնի Պոլիս:

Առաջին դաղթական հայերը իրենց բնակավայրը հաստատած են Վերին փողոց Arano Makhala կոչուած բարձրադիր վայր մը, ուր կանոնաւ են առաջին մատուցը, շուրջը գերեզմաններով: Բայց այդ վաղեմի բոյնին մէջ հազիւ երկու դար կրցած են մնալ եւ անշուշտ նեղուելով հարեւաններու սոնձգութիւններէն՝ ստիպուած են վերցնել իրենց ծուխն ու օճախը, փոխադրելու համար աւելի վար, քաղաքին արեւելեան կողմը՝ յունարնակ թաղերու եզրը: Այնուհետեւ իրենց առաջին որրանները՝ մատուց եւ գերեզմանատեղի՝ ծառայած են իբրեւ ուխտավայր մինչեւ ԺԹ. դարու սկիզբը, երբ ժամանակը տակաւ առ տակաւ անհետացուցած էր անոնց հետքերը:

Գաղթական հայոց նախկին բնակավայրը Փաշալ Սուլթան անունը ունէր:

«Այս նոր բնակավայրին մէջ կը փութան կանոնել Տաճար մը Նախավայրին անունով եւ գերեզմաննոցի կը յատկացնեն ընդարձակ պարտէզը: Տափարակ արտը՝ որուն վրայ կը կառուցանեն իրենց բնակարանները՝ կը տարածուէր հանրածանօթ կապելաներու անցքէն (Մէյ-խանէ պողազը) մինչեւ Մէլլաս գետին ջրմուղն ու ամբարտակը: Ժամանակը անհետ ըրած է նաեւ հայոց այս երկրորդ տեղափոխութեան՝ ինչպէս եւ մատրան շինութեան ճիշդ թուականը, որ կ'ենթադրուի ԺԶ. դարուն վերջերը:

Արիւնալի պատերազմներու, ժանտախտի, երկրաշարժներու եւ հրդեհներու նշաւակ եղած է այս գեղեցիկ քաղաքը: 1688 Յուլիս 10ի շարժը ու անոր յաջորդող կրակը 14.000 հոգիի կորուստ պատճառած են. հիմնայտակ կործանած են նշանաւոր շէնքեր, եւ հրոյ ճարակ եղած են հայոց եւ ուրիշ ազգերու եկեղեցիներ եւ 14 մեծամեծ մզկիթներ: Գաղթին մէջտեղ բացուել է ահալին փոս մը՝ ուրիշ սեւ ու ժանտաճառ ջուր մը հոսելով՝ ապականել է ամբողջ երկիրը: Հանապաղօրեայ ցնցումը, հըրդեհն ու կորոպուտը լափլիզած են այս ճոխ շահաստանը: 1778ին դարձեալ շարժ ու հրդեհ: 1812ին ահուելի ժանտախտ մը, որ թուրքիոյ զանազան մասերն այցելած էր, Իզմիր ալ հան-

դիպելով 45.000 մարդկային կեանք խլեց եւ մնացեալ բնակչութիւնը հալածական ըրաւ, այնպէս որ քաղաքը բոլորովին ամայացաւ եւ փողոցները խոտով ծածկուեցան:

Իսկ 1845ին հրդեհը որ մոխիր դարձուցեր է եկեղեցի, դպրոց, հիւանդանոց եւ Հայոց թաղ: Այսքան արկածներու թոճ ու բոճին վերապրող դաղութ մը բնական էր որ միջոց չունենար անեղձ պահելու իր պատմական յիշատակները »:

Յայտնի չէ թէ որ թուականէն սկսեալ հայերը Բագոս լեռան բարձունքներէն վար իջան ու հաստատուեցան այժմու ՀԱՅՆՈՅ կոչուած թաղը: Ըստ հնագէտներու եւ ամենէն հին տապանաքարերու, կ'ենթադրուի որ այդ դաղթը տեղի ունեցած ըլլայ ԺԶ. դարու վերջերը: Շատ մը տապանաքարեր կան Ս. Ստեփանոսի պարտէզին մէջ, որոնք վերոյիշեալ մատուցին շուրջը դոնուող գերեզմանատունէն փոխադրուած են:

1500ի վերջերը, հայերը հեռանալով նախկին մատուցին վայրէն, հաստատուած են Հայոց քաղ (Quartier Arménien) որ անուանի էր նախապատերազմեան շրջանին իր ուղիղ եւ կանոնաւոր փողոցներու բաժանումով: Հայոց թաղը առաջին տեղը կը բռնէր Չմիւռնիոյ բոլոր թաղերուն մէջ: Այս թաղը ելեւէջներ չունէր եւ ո'չ ալ անել ու օճապտոյտ արահետներ: Այս կանոնաւոր բաժանումը կատարուած էր 1845ի մեծ հրդեհին՝ որ ծագած էր Ս. Ստեփանոսի Տաճարին մօտ գտնուող Իմամ Օղլու խան կոչուած վայրէն: Հայոց թաղն ալ ինչպէս նաեւ ազգային բոլոր հաստատութիւնները՝ ուրիշ թաղերու պէս մոխիրի վերածուեցան:


Չմիւռնիոյ ծովեզերեայ եւ վաճառաւաճ գիւղերն բերումով, հինէն ի վեր հոն հաստատուած Չմիւռնահայեր աշխարհի ամէն կողմը առեւտրական կապեր հաստատեցին եւ իրենց գործանութիւնները տարածելու համար, ստիպուեցան արտասահման դաղթելու հարկադրանքին ենթարկուիլ:

Ստորեւ վիճակագրութիւններ կը հաստատեն թէ հայերու թիւը 1600 թուականէն առգին, զանազան շրջաններու մէջ պահելով գրե-



Ըստ եւրոպացի նամբորդ - պատմագետներու, մինչեւ այսօր մեր ձեռքը հասած տուեալներ եւ տեղական աղբիւրներէ քաղուած ցուցակ մը՝ որ կարելի է առաւել կամ նուազ չափով փոփոխութեան ենթարկել:

Թուական	Աղբիւրներ	Հայեր	Ընդհ. բնակչք.
1631	Tavernier	8000	90000
1702	Tournefort	200?	27000?
1730	Tollot	7000	76000
1739	Pochoche	2000	100000
1776	Choiseul Gouffier	6000	102000
1812	Taucoigne	10000	106000
1836	Ch. Texier	10000	150000
1837	Journal de Smyrne	6000	130000
1840	Joseph Barzigli	5000	130000
1857	Shepherd	10000	180000
1861	L'Impartial	7000	123788
1868	B. Slaas	12000	187000
1884	F. Reclus	9000	192000
1885	D. Georgiadis	7000	187000
1890	Թ. Ճերմակեան (Հանդէս Ամսօրեայ) (առանց շրջաններու, բնիկ Զմիւռնիացի)	6683	250000
1898	Հ. Յ. Վրդ. Քոստեան «Հայքի Զմիւռնիա եւ ի շրջակայս» (Գաղթական եւ տեղացի խառն) 11 - 12000		340000
1906	Paillarès Lanterne (Bulletin d'Orient, 30 juin 1906).	8500	275000
	Հայ Առաջնորդարան Գիւանատան վիճակագրութիւն Ս. Ամատեան (Թէոդիկի Տարեցոյց)		
1910		8760	350000
1918	T. K. Skalieri	11360	
1922	Տօքթ. Գ. Օ. Գալուստեան (Յունահայ Տարեգիրք, Բ. տարի) 30000		1921ին Հելլէն կառավարութ. կիլիկիայէն Իգմիր եւ շրջակայքը փոխադրած հայ գաղթականներն ալ միասին:



Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ (Այժմ վլատակ)

Թէ միշտ նոյն միջինը կ'զգած է 8 - 10 - 12 - 13 եւ 15 հազար:

1631ին, ըստ Tavernier ի, բնակչութեան թիւն էր 90,000, որուն 8000ը հայ: 1898ին պաշտօնական վիճակագրութեան համաձայն, հայերու թիւն էր 11 - 13,000, իսկ նախապատերազմեան շրջանին Զմիւռնիան իր շրջաններով ունէր 15,000 հայ:

Գաւառներէն փախուստ տուող գաղթական հայերն էին որ նորանոր ուժերով բազմացուցին տեղացի հայութիւնը. եթէ ոչ, Իգմիր՝ շատոնց հայ գաղութը ըլլալէ պիտի գաղթէր:

Աչքառու պարսպայ մը: Գանտիոյ հինաւորաց հայ գաղութն ալ կազմուած ամբողջութեամբ Զմիւռնահայերէ, այսօր գոյութիւն չունի: Չունին նոյնպէս՝ Վեներտիկ, Լիվոնո, Թրիէսթէ, Ամսթերտամ եւ Մարսիլիա, յաւէտ կորսուած գաղութներ, որոնք իրապէս զմիւռնահայութիւն ողիով շագխտուած՝ ժամանակակից պատմութեան ոչ մէկ հետք կը թողուն: Եղիպտոսի գաղութը սակայն, կազմուած նոյնպէս բազմաթիւ հին զմիւռնահայ գաղթականներէ՝ գերազանցեց բոլորը: Զմիւռնիա՝ հայ մտքի եւ յառաջդիմութեան որրաններէն մին՝ շուրջ դար մը առաջ իր ծոցէն ի յայտ բերու հանճարեղ վանանդեցիներ, աշխարհահռչակ Եւսուֆեաններ, Նուպար եւ Պօղոս փաշաներ, եւն. որոնք անշահախնդրօրէն սատար հանդիսացան

հայ եւ օտար ժողովուրդներու բարեկարգութեան, գարձան մէկ մէկ միջազգային դէմքեր եւ սիրելի՛ ամբողջ հայ ժողովուրդին:

Թէեւ հայերը չեն կրցած պահել 400,000ի մօտ բնդհանուր ազգաբնակչութեան քով համեմատական թիւ մը, սակայն միշտ ունեցած են առաջնակարգ դիրք, ընկերային, առեւտրական, գիտական բոլոր մարդերու մէջ:

1922ին, Զմիւռնիոյ հայերուն թիւը աւելի քան 30,000 կը հաշուուէր: Այս թուական առաւելութիւնը կիրիկիայէն Իգմիր փոխադրուած գաղթականներուն պէտք է վերագրել:

\* \* \*

Զմիւռնիոյ մէջ կառուցուած եկեղեցիներու շարքին առաջին տեղը կը զբաւէ Հայոց Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ, որ Պոլսոյ ամենէն գեղեցիկ եկեղեցիները պիտի գերազանցէր: Լատինները ունէին հինգ մեծ եկեղեցի, բացի փոքր մատուռներէ. Յոյները ունէին վեց մեծ եկեղեցի, բայց ասոնց մէջ չկար եկեղեցի մը որ հաւասարէր տաղանդաւոր ճարտարապետ Մելքոն Նրամեանի շինած Ս. Ստեփանոս եկեղեցիին, որ իր կառուցուածքով, արտաքին եւ ներքին հոյակապ յորինուածութեամբը, ճարտարապետական դանազան ոճերու հիանալի արտացոլմամբ, հայկական արուեստի հրաշալի համադրութիւն մը կը ստեղծէր: Տաճարին այս

ուրոյն ոճը եւրոպացի դրօսաչըլիկներուն զարմանք կ'ազդէր :

Տաճարին վերանորոգութիւնը տեղի ունեցեր է 1688ին, Եղիազար կաթողիկոսին եւ առաջնորդ Յովսէփ վարդապետի օրով : Երրորդ անգամ վերաշինութիւն մը կը յիշուի 1743ին՝ Ղազար կաթողիկոսի եւ Առաջնորդ Աղեքսանդր արքեպիսկոպոսի ժամանակ :

1845ի մեծ հրդեհէն վերջորրորդ եւ վերջին կառուցման թուականն է 1853, Ներսէս Կաթողիկոսի եւ առաջնորդ Պօղոս արքեպիսկոպոս Թաղթապետի ատեն :

Ճարտարապետներն են՝ Սիմոն Կեսարացի եւ Պոլսեցի համբաւաւոր Կորտիկ Մինասի աշխատակից Մելիան Երամեան :

Ս. Ստեփանոս Աւագ դրան աջ ու ձախկողմերը, սիւներու դաւիթին մէջ, կը հանդէսն երկու նշանաւոր հովիւներ՝ Պօղոս Թագթապետան եւ Մելփիսեղեկ Մուրատեան :

Եկեղեցին շրջապատուած էր հին դերեզ - մանատուն - պարտէզով, որուն գետինը փրօուած հնազոյն տապանաքարեր 1555 - 1567 թուականները կը կրեն : Զուղա, Թիֆլիզ, Երեւոյթ, Կարփի, Ղափան, Գանձակ, Նախիջեւան, Գողթն, Աստապատ, Շաշիկէտ, Եւն. առնունները որոնք կ'երեւին տապանաքարերուն վրայ՝ ցոյց կուտան թէ Իզմիրի նախահայրերը Կուրի, Երասխայ եւ Մեւանայ ափերէն բաժնուած են :

Մինչեւ 1880, Ս. Ստեփանոսի լայն շրջափակը իրրեւ գերեզմանաւուն կը ծառայէր : Պարտէզին մէջ եկեղեցականներու շարքին՝ կը դանուէին տապանները պետական մարդոց, զրազաններու եւ ականաւոր ուսուցիչներու՝ Տէր Յովհան Միրզայեան վանանդեցի, Եղիպտոսի փոխարքայի գործակատար Պետրոս Զելեյի, ձեւափորեան ընտանիք, Ապրօ, Եւստափ եւ Սիմոն Զելեյիներ, Մարգար Միրզա վանանդեցի, Նախիջեւանցի Բարսեղ վարդ., Աւագեաններ, Ռուբէն Անդրէաս Փափագեան, Գաբրիէլեան ընտանիք, ինչպէս նաեւ հանձարեզ ճարտարապետ Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ՝ Պոլսեցի Մելիան Երամեան : Իսկ Ս. Ստեփանոս տաճարի նորոգութեան ժամանակ Նուպար փաշայի հօր՝ Մկրտիչ Ազա Նուպարեանի շի-



ԵՂԻՇԷ ԱՐՔ. ԴՈՒՐԵԱՆ

րիմին տապանաքարը երեւան հանուած էր :

Ազգային հիմնարկութիւններու շարքին, կարեւոր տեղ մը կը զբաւէ Հայոց Առաջնորդարանը, կառուցուած 1858ին, Բալուցի Խաչատուր Ղազէրեանի ծախքով :

1860ին, Ազգային Մասձանագրութեան հոչակումէն առաջ, Զմիւռնիոյ հայոց կրօնական, քաղաքական, կրթական եւ ազգային դանաղան հաստատութիւններու վերաբերեալ գործերը կը ղեկավարուէին Ամիրաներու իշխանութեամբ, որոնցմէ մանք լաւ եւ ուրիշներ վատ համբաւ թողուցած են :

1860էն ի վեր, Մասձանագրական եղանակով, հաստատուած էր Երեսփոխանական ժողով մը, իր վարչական մարմինով, Քաղաքական ժողովով, ինչպէս եւ Կրօնական, Ուսումնական եւ Գաղտնական Սորհուրդներով :

Երեսփոխանական ժողովի անդամները կ'ընտրուէին ժողովուրդի քուէով : Ասոնց կարգին կար նաեւ Հիւանդանոցի Հոգաբարձութիւն մը, Քաղաքական ժողովէն ընտրելի եւ անոր ենթակայ, բազկացած ասնուազն հինգ անդամներէ, որոնցմէ մին՝ անհրաժեշտօրէն բժիշկ : Այս վերջինին պաշտօնն էր հիւանդանոցի եւ անոր կալուածներուն հոգաբարձութեան ու եւեւմուտքի հսկողութիւնը :

Զմիւռնիա տաճարակալան վիճակ էր :

Նախապէս Էջմիածնի թեմ էր, յետոյ ուսումնական պատերազմի հետեւանքով Կ. Պոլսոյ Պատրիարքութեան իրաւասութեան ներքեւ անցաւ :



ՄԵԼՔԻՍԵՂԵԿ ԱՐՔԵՊԻՍԿ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Առաջնորդութեան մէջ կը յիշուին Սիւնեաց Արքեպիսկոպոս (Տէր Մարտիրոս Տաքեւացի Միրզեց) 1800ին, Ստեփան Եպիսկոպոս Ենովէեան (1825), Աղաւնի Ստեփան Եպիսկոպոս եւ յետոյ յաջորդաբար, Երուսաղէմի Պատրիարք Գաբրիէլ Արքեպս. 1830ին, Պօղոս Արքեպիսկոպոս Թագթապետ (1838 - 1872), Մատթէոս Եպիսկոպոս (1842 - 1845), Խորէն Եպիսկոպոս Նարայէ (1873), Մելփիսեղեկ Արքեպիսկ. Մուրատեան (1877էն 1888 եւ 1898էն 1903), Ներսէս Եպիսկոպոս Արաւանեան (1891 - 1898), Եղիշէ Արքեպիսկոպոս Գուրեան (1903) Մատթէոս Եպիսկոպոս Ինկէեան (1918) : Իսկ Զմիւռնիոյ հայ գաղութի ահաւոր փլուզումէն մազապուր փրկուած՝ հանդուցեալ Ղեւոնդ արքեպիսկոպոս Գուրեան (1922 սեպտեմբեր 10) :

Առաջնորդներէն ամենէն բազումըրը եղած է Մելքիսեղեկ Արքեպսկ., որ տեսած է Իզմիրի Հայուն բարեբաւտիկ օրերը : Նախապահած է մէկէ աւելի պատմական շքեղ հանդէսներու : Նաւակատեաց հանդէս Ս. Լուսաւորիչ Հիւանդանոցի (1879 Յունվ. 14), Հիմնարկէք Ս. Հսիփսիմեան վարժարանի (1883 Մայիս 9), Նաւակատէք նոյն վարժարանի (1884 Մայիս 6), Բացում Նոր Գերեզմանատան (1884 Մայիս 13), Հիմնարկէք Ս. Մերոպեան վարժարանի (1886 Փետր. 5), Բացում նոյն վարժարանի (1886 Նոյ. 30), 25ամեայ Յորեկեան Ընթերցա-

տան (1894 Փետր. 6), Յիւնամեայ Յորեկեան Մամուրեանի (1899 Հոկտ. 19), Հարիւրամեայ Յորեկեան Լուսաւորիչեան Հիւանդանոցի (1902 Մարտ 31), Բացում Մերոպեան գիշերօթիկ բաժնի, իսկ Պապրճեան Մանկապարտէզը՝ Ե. Դուրեան Ս.ի օրով :

Յիշատակութեան արժանի հիմնարկութիւն մըն է մասնաւորաբար Մեսրոպեան վարժարանը որ մօտաւորապէս 125 տարուայ շրջան մը բոլորելով, տուած է աւելի քան 1500 շրջանաւարտներ :

Մերոպեան վարժարանի հիմնարկութիւնը կը պարտինք Ապրօեան տոհմին, 1799ին : Տարիներ վերջ, Շնորհք Ամիրայի աջակցութեամբ, հոն կը սկսի դասաւանդել համբաւաւոր, անդրանիկ ուսուցչապետ Տէր Յովհան վանանդեցի :

1825ին, յիշեալ փայտաշէն դպրոցը նեղ դարով միւսնոյն տեղոյն վրայ աւելի ընդարձակ, շատ աւելի լաւագոյն պայմաններով, նմանապէս փայտաշէն, միայարկ շէնք մը կառուցուած է Ս. Ստեփանոսի եկամուտներով :

Վարժարանի շինութեան նիւթապէս եւ բարոյապէս օգնած են Գր. Պապօեան (Անգլիական հիւպատոսարանի թարգման) եւ Էփիգեան Աւետիս : Առաջնորդարանի դիւանատան մէջ պահուած արձանագրութիւններն են նախկին վարժարանի շինութեան մասին :



Տ. ՅՈՎՀԱՆ ՄԻՐԶԱ ՎԱՆԱՆԻՅՅԻ  
1772 - 1840  
Անգրանիկ Ուսուցչապետ Ս. Մեսրոպեան  
վարժարանի եւ մեծ հայկաբան

«Ս. Մեսրոպեան Վարժարան Հայոց Չմիւռնիոյ: Հին յիշատակ Ասորեանց տննիքն, միևնեւ ցարդ արանդարեանք ինկացեալ: Նոյն կառուցեալ ի 1825 ի վերայ գեւնոյ հնոյն արդեալք Ս. եկեղեցոյ: Ունի յիշատակ ի նախս որսն վերին ուսումնարանին, որ է.»

«Դպրատունս այս ի հիմնեց ճորոգ կառուցաւ արդեալք եւ ծախիւք Ս. Սեպիսնոս Եկեղեցոյս Չմիւռնիոյ, Տիրապան ֆաղափս, ի վարժունն Օրհնեալ Ազգիս դեռաբոյս մակակնց: Յաւի Տեառն 1825. նոյեմբեր 15:»

Մեսրոպեան վարժարանի շինութեամբ նոր դարապարտ մը կը սկսի Չմիւռնիոյ հայութեան համար:

Առաջին ուսուցիչներն են Յովհան Վանանդեցի, Տ. Գալուստ Բահանան եւ Անդրէաս Վարժապետ Փափագեան: 1831 - 45ին վարժարանը կը բոլորէ խիստ փայլուն շրջան մը, զոր կ'արժէ Իգմիւրի վարժարաններուն Ոսկեղարք կոչել: Անդրէաս վարժապետն է, որ առաջին անգամ ըլլալով, 1831ին մտցուցած է վարժարան եւրոպական լեզուներու դասաւանդութիւնը, յատկաներէն, յունարէն, ֆրանսերէն, անգլիերէն, իտալերէն նաեւ թուրքերէն: Այդ շրջանին հայ եւ օտար լեզուներով քատերական ներկայացումներ կը սկսին տրուիլ եւ ընտանեկան շքեղ երեկոյք - պարահանդէսներ կը սարքուին:

Սակայն այս արդիւնաւոր շրջանը կ'ընդմիջուի 1845ի աղէտալի Մեծ հրդեհով:



Գիտակից հայրեմասէր ՏԵԿԻՆ ՖՈՒԼԻԱՆԷ 3: ՅՈՎԱԷՓ ՉԵԼԷՊԻ ԵՆՈՒՍՈՒՖԵԱՆ



ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆ

Լեզուագէտ եւ նշանաւոր հրապարակագիր

1835ին Եգիպտոսի փոխարքայի գործակալ տար, մեծահարուստ եւ բնիկ Չմիւռնիացի Պետրոս Չելէպի Եուսուփեան (Թրիէսթէ հաստատուած վաճառական), Պալթագրեանի բաւելութեամբ 40,000 Ֆրանքին կը կտակէ Մեսրոպեան վարժարանի ֆրանսերէն եւ անգլիերէն լեզուներու ուսուցման համար:


Յովսէփ Չելէպի Եուսուփեան, ներշնչուած հանդուցեալ մօրեղբորը զաղափարներէն մեծ հոգածութեամբ կը շարունակէ եւ կը սարածէ նաեւ եւրոպական լեզուներուն ուսուցումը Հօրփոխմեանց աղջկանց վարժարանին մէջ:

Յաջորդաբար իբրև տեսուչ կը յիշուին Տէր Մարգար Վանանդեցի, Անդրէաս Վարժապետ, Ազարէգեան, Տէպէնեան, Չէնիքիւնեան, Առաքելեան, Գուրգէնեան, որոնք փոխն ի փոխ կը պաշտօնավարեն մինչև 1866:

Այդ շրջանին գործունէութեան մէջ կը դրանենք ազգային գործիչ եւ դիւանագէտ Ստեփան Ոսկան (Հիմնադիր եւ խմբագիր «Արեւելք» (1858) եւ «Արեւմուտք» (1859) քերթերու Փարիզի մէջ):

1846ին Գերազոյն Ժողովին մէջ Ատենայեանի դեր կատարած՝ Լօղօփէրի տրտղոսով եւ իր լեզուադիտութեամբ միջազգային համբաւ ստացած էր: Ներհուն ֆրանսագէտ՝ ֆրանսերէնի եւ աշխարհարարի ուսման մասնաւոր ուշադրութիւն կը դարձնէ:

1860ի վերջերը վարժարանի տեսուցիչ Եան կարճ պաշտօնավարութենէն հրժարե-



ԱԶԳ. Ս. ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

լով, Իգմիւրի մէջ կը հիմնէ « La Réforme » Ֆրանսերէն թերթը: Ոսկանի յաջորդը՝ Փարիզի Մուրատեան վարժարանի աշակերտ՝ Մ. Մամուրեան՝ մանկավարժական թարմ սկզբուններով զինուած՝ տակաւ կը բարեփոխէ վարժարանի համաձայն ուղղութիւնը: Մեսրոպեան այդ ժամանակներուն կը բոլորէ ուրիշ արդիւնաւոր շրջան մը որ «Արժաքի շրջան» կ'ընայ կոչուել: Մ. Մամուրեանի օրով կատարուեցաւ վարժարանի յարելանը:

Մինչև 1876 վարժարանի աշակերտները ճրիվարժ էին եւ ծախքերը կը հոգացուէին մեծահարուստ ազգայիններու նուէրներով: 1877ին օրուան Տնտեսական եւ Ուսումնական Խորհուրդները թուշակ նշանակեցին բարեկեցիկ հայերու գաւակներուն համար:

1866ին երբ արդէն 61 տարուան շրջան մը բոլորած էր վարժարանը, հինին տեղ նոր շէնք մը կառուցուեցաւ Յովհ. Սպարթալեանի ծախքով, Մէլքեանգեկ Եպ. Մուրատեանի շրջանին:

Ս. Մեսրոպեան վարժարանի շինութեան արձանագրութիւնը՝ բազում Առաջնորդարանի դիւանատան յիշատակարանէն:

« Վսեմաշուք Յովհաննէս Էփէնտի Սպարթալեան հաւուքեալք Ազգին, ի հիմանց Բակեալ գվերոյիշեալ վարժարանս Ս. Մեսրոպեան, իւրով ծախիւք

վերաշինեաց գալծմեան նոր վարժարանս Ս. Մեսրոպեան առաւել ընդարձակ եւ առաւել հոյակապ ի մշտնջենաւոր վախելումն Ազգիս Հայոց: Հանդէս օրհնութեան եւ բացման նոր վարժարանիս շքեղապէս կատարեցաւ ի Կիրակէի 30 Նոյ. 1886 ամին: »

Ս. Մեսրոպեան վարժարանը ունէր իր սեփական թանգարանը, որ մօտ 2000 հատոր գիրք կը պարունակէր հայ եւ օտար լեզուներով:

Հետաքրքրութեան եւ յիշատակութեան արժանի էր Մեսրոպեան Վարժարանի թանգարանին մէջ գտնուող հուշարձանը: 1695ին Ամբաստան տղապետը «Համատարած աշխարհացոյց» տախտակ մը՝ մէկ ու կէս մեթր տրամագծով՝ որ կը ներկայացնէր այն ատենը՝ ծանօթ արեւելեան եւ արեւմտեան կիսագունդերը: Աստղագիտական եւ դիցարանական նկարագրող սքանչելիք մըն էր ան՝ փորագրել տրուած թովմաս եպիսկոպոս Վանազեցիին կողմէ:

Թանգարանի նուիրատուներէն կը յիշուին: Գր. Կաստանդեան, Գր. Արէլ Գուլարեանց, Շարիօ Նուպարեան, Կ. Վրդ. Շահնազարեան, Տր. Չայեան եւ Տ. Կիւլգատրն Շահումեան: Իսկ բնագիտական գործիքները նուիրուած են՝ Գալուստ Կաստանդեանի կողմէ:

1876-1877



Նորաշէն վարժարանի Տեսուչն էր Մ. Մամուրեան, որ պաշտօնավարեց մինչև 1889: Մ. Մամուրեանի պաշտօնավարութեան երկար շրջանը կ'ընդմիջուի յայտնի մանկավարժ Ազեքսանդրապոլսեցի ուսուսչայ Յ. Տէր Միրաբեանի քառամեայ բայց արդիւնաւոր տեսչութեամբ: Յաջորդաբար կը պաշտօնավարեն՝ Պրուսացի Գեորգ Տէր Բարթուղէմոսեան (1894) Խաչիկ Գազազեան (1896), Մկրտիչ Սարեան (1898), Թովմաս Պոյանեան (1910), Գեորգ Տէր Բարթոլ (1912), Գառնիկ Բարունակեան (1918) եւ, Չմիւռնիոյ եղեռնին ամենավերջին համակրելի եւ տարարախտ տնօրէն՝ Անդրանիկ Կարապետեան, 1922 Սեպտեմբեր 9:

Վարժարանին համբաւեալ ուսուցիչներէն կը յիշուին՝ Ստեփան Չափրեան, Բ. Բարսեղեան, Ս. Այվելիքեան, Ա. Տիվիրիկեան, Կ. Նաւասարդեան, Գառնիկ Սարափեան, Ռուբէն Որբերեան, Ս. Ամատեան եւ այլն:

Մեսրոպեան վարժարանի աշակերտներուն միջին թիւն էր տարեկան 4էն 500:

Իզմիրցիին բաղաւոր է որ իր մէջ կարող եղած է համբել մէկէ աւելի բարերարներ ու բարերարուհիներ, որոնք օժտած են զինք թանկարժէք հաստատութիւններով:

Այսպէս՝ 1820ին հիմնուեցաւ, Յակոբ աղա Սարգիսեանի (Վիեննա հաստատուած վաճա-



Բարերարուհի Տիկին Հովհաննիսէ ԿՈՍՏԱՆԴԵԱՆ Վերաշինած՝ Ազգ. Ս. Հովհաննիսեանց վարժ. ք. 1849ին:



Վաստակաւոր ուսուցիչ աշխարհաբարի եւ գրաբարի եւ հմուտ բանասէր ՍԱՐԳԻՍ ԱՄԱՏԵԱՆ

ուսուցիչ ծախքով, ՀՈՒՓՍԻՄԵԱՆՅ աղջկանց վարժարանը Հայնոցին մէջ որ զայն կը նուիրէ Ս. Հովհաննիսէի անունն:

«Ս. Հովհաննիսեան վարժարան Հայնոց Չմիւռնիոյ:

«Չմիւռնիոցի Մեծ. Յակոբ Սարգսեան, վանառական ի Վիեննա, իւրով արդեանքի եւ կառուցանել ի վերայ ազգային գեղնոյ յարոց աղջկանց յիսախարկ եւ գեղեցիկ.»

(Առաջնորդարանի ղիւանատան Յիշատակարանէն քաղուած):

Այս վարժարանը, 1845ի համայնաշինչ հրդեհին այրեցաւ եւ չորս տարի յետոյ, 1849ին, կրկնայարկ եւ քարաշէն հոյակապ նոր վարժարան մը կառուցուեցաւ վեհանձն տիկնոջ՝ Յովսէփ Չելչպի Եւուսփի քրոջը բարերարութեամբ՝ Տիկին Հովհաննիսէ Կոստանդեանի ծախքով (մայր՝ Տօքթ. Կոստանդի):

Վարժարանի երկրորդ շինութեան արձանագրութիւնն է.



Ազգ. Երկա. վարժարաններու հայերէնի եւ գրականութեան վաստակաւոր ուսուցիչ Ա. ՏԻՎՐԻԿԵԱՆ

Չկնի այրեանն ի 1845, վերսին կառուցաւ նոր յարոց աղջկանց կրկնայարեւ քարակիր, արդեանքի Չմիւռնիոցի Ազնիւ Հովհաննիսէ Տիկին Գր. Կոստանդի եսնի, եւ կոչեցաւ Ս. Հովհաննիսեան վարժարան: Բեշիսիկ յոյոց, թիւ 106: Թուական շինութեան 1849 Փետրուար»

Խնամակալուհիներու մէջ կը յիշուին մասնաւորապէս Տիկին Վարդուհի Չիլիմկիրեան, Օր. Զարուհի Վարպետեան, Օր. Թագուհի Տամկանեան, Թագուհի Էլմասեան, Տաւուր Էլմասեան, Մարիամ Կարապետեան, Գայեանէ Սրվազեան, Մարիամ ձէլչպեան, Բերսաբէ Աւագեան, Մարիամ Ալվիարեան, Թագուհի Յակոբեան, Էլիզա Տէտեան, Սրբուհի Տիլպերեան, Մարիամ Մամուրեան, Յուստիանէ Եսայեան եւ այլն:

Կրթութեան հետզհետէ ծաւալումով, Հրովհաննիսեանց վարժարանի շէնքը անբաւական նկատուեցաւ եւ 1884ին, Ժողովրդական ընդհանուր եւ խանդավառ հանդանակութեամբ, աւելի մեծ եւ հոյակապ շէնք մը կառուցուեցաւ՝ Մեղքիսեղեկի օրով:

Նորակառուց շէնքին վարժարանին արձանագրութիւնն է.

«Ազգային կաւոֆ եւ հաւանութեանք ի 1882 ֆանդեցաւ վարժարանս վասն

անհնարեան եւ հնարեանն. առ ի շինել նոր վարժարան-առաւել ընդարձակ: Արդեւ ձեռնարկեալ է շինութիւն նոր վարժարանս ի Չմարտ սնունտեայ յոյոցի, նուիրոֆ հանգանակութեան Չմիւռնիոցի սզգայնոց:

Աւարեցաւ շինութիւն նոր վարժարանս եւ վեճակահանուի կասարեցաւ բացուան նորին ի 6 Մայիսի 1884»:

Այս թուականէն՝ Մեսրոպեան եւ Հովհաննիսեանց վարժարաններու տեսչութիւնը միացուեցաւ: Տեսչութիւնը կը յիշուին մասնաւորապէս Օր. Սարեանիկ Հալչպիեան (Տիկին Բարթոլ) 1894, որ աւելի վերջ, երկար տարիներ, երկուսն վարժարաններու ուսուցչութեան պաշտօնին կը կոչուի: Օր. Եւփիմէ Օտեան, 1895, Օր. Թագուհի Խանեան, 1897, Ելմ.: Ուսուցչութիւնը Տիկին Պէլլերեան՝ Իսկ Տիկին Մելիկուհի Նաւասարդեան՝ աւելի քան երեսուն տարիներ պաշտօնավարած է միեւնոյն վարժարանին մէջ:

Հովհաննիսեանց վարժարանը ունէր այցելու եւ մնայուն վարժութիւններու եւ դասատուներու ընտիր հոյ մը: Աշակերտութիւններու ընդհանուր միջին թիւը եղած է 300էն 400:

Մեսրոպեան եւ Հովհաննիսեանց վարժարանները, մօտ հարիւր տարուայ շրջան մը բոլորելով, հանդիսացած են կրթութեան եւ դաստիարակութեան մշտավառ կեդրոն մը, ո՛չ միայն Չմիւռնիոյ հայութեան, այլ Թրքահայաստանի հեռաւոր կեդրոններուն համար, ուրկէ աշակերտներ եկած են յաճախ Չմիւռնիա ուսում եւ կրթութիւն ստանալու:

Չմիւռնիոյ հայութեան պատիւ բերող հաստատութիւններէն մին է նաեւ Ս. ԼՈՒՍԱՒՈՐ ԶԵՆԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՅՐ: Հիւանդանոցը նախապէս շինուած էր 1801ին: Մերօրեայ Ազգային Հիւանդանոցին գտնուած տեղւոյն վերայ, հայերը յատկապէս ժամտախտաւորներու համար սպասարկութիւն մը կը կազմակերպէին: Սկզբները այդ նոյն սպասարկութիւնը «Մահի տուն» անունն էր ստացած:

Ժամանակին ժամտախտէ վարակուածներ կիրապատ կառքերով քաղաքէն դուրս, մերձա-



ԵՐԿՈՒ ԱԶԳԱՍԷՐ ԵՒ  
ԲԱՐԵՐԱՐ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Մահարձաններ՝  
1922ին ֆանդում

Մահարձան  
ՅԱԿՈՒՅ ՍՊԱՐԹԱԼԵԱՆԻ  
1825 - 1882



Մահարձան  
ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍՊԱՐԹԱԼԵԱՆԻ  
1831 - 1887

կայ ամայի վայր մը կը փոխադրուէին: Այսպէս՝  
հայ, յոյն, լատին՝ իւրաքանչիւրը ունեցեր է  
իր սեփական «Մահի տուն»ը (Մօրթափիա):

Սուրբ Լուսաւորիչ Հիւանդանոցին, — եր-  
բեմնի «Մահի տան» —, ո՛ր թուականին կա-  
ուուցուած ըլլալը անծանօթ է: Գիտենք սակայն  
թէ Հանի Հայրապետ անունով ծանօթ ազգային  
մը անոր հիմնադիրը եղած է:

Հաճի հայրապետի շինած միայնակ շէնքը  
կը թուի թէ կը բաղկանար բարձրադիր, բն-  
դարձակ եւ օղակա սրահէ մը՝ երկու կողմերը  
հիւանդներու յատկացեալ ննջասենեակներով:  
Ծերերու, անկարներու, կարօտ ու անօղակա  
ազգայիններու, ինչպէս նաեւ յիմարներու հա-  
մար, շինուած էին բաժիններ: Այս պատճառաւ  
թերեւս բնիկ զմիւսնահայեր սոյն զթատիրա-  
կան հաստատութեան բնօրհանրապէս «Աղփա-  
տանոց» անունը կուտային:

«Մահի տուն»երու (Մօրթափիա) Սանճոյ  
Գոյէսի բնուած վայրը փոխադրուելէն վերջ,  
անոնք կը յատկացուէին այլեւս չքաւոր բնա-  
նիքներու բնակութեան:

1842ին Հաճի Աւետիս Էջիղեանի նախաձեռ-  
նութեամբ կը շինուի Ս. Լուսաւորիչ եկեղեցին,  
Հիւանդանոցի շրջափակին մէջ:

Եկեղեցւոյ Աւագ զբան վրայ շինութեան  
արձանագրութիւնն է:

«Կառուցաւ եկեղեցիս Սրբոյն Գրիգորի  
Լուսաւորչին արդեամբք համայն ժողո-  
վրդոցս ազգիս յառաջնորդութեան Տ.  
Մատթէոսի Արքեպիսկոպոսի 1842.

Եւ այժմ նորոգեցաւ արդեամբք երկուց  
պայագատաց Յակոբայ եւ Յովհաննու  
Սպարթալեանց Յառ. Տ. Մելիսեդեկ Ծ.  
Վրդ. 1879»:

1801ին, Զմիւսնիոյ առաջնորդ Մարտիրոս  
Արքեպիսկոպոսի ժամանակ, ժողովրդի հանդա-  
նակութեամբ, շատ աւելի բաւարար պայմաննե-  
րու մէջ, Ս. Լուսաւորիչ Հիւանդանոցին կա-  
ուուցման կը ձեռնարկուի:

«Նախահարուցումն հիւանդանոցիս  
եղել ի 1801, ի հայրապետութեան Տեառն  
Դաւթի Կարողիկոսի անկեայն հայոց,  
արդեամբք եւ տրոյք հաւնայն ժողովրդեան  
ֆաղսփիս»:

(Յիշատակարանէն ֆաղում)

Իսկ 1879 թուին, «Ի հիմանց նորոգ կա-  
ուուցաւ հոյակապ եւ շքեղ ֆան գառա-  
ջինն, մի միայն արդեամբք երկուց վե-  
հագն պայագատաց Յակոբայ եւ Յով-  
հաննու Սպարթալեանց»:

(Յիշատակարանէն ֆաղում)

Բացման հանդէսը կատարուած է 1879  
Յունուար 14ին, Մելքիսեդեկ եպօ. Մուրա-  
եանի օրով:

Հիւանդանոցը շինուած էր նախկին գետնի  
վրայ, ամբողջութեամբ քարովիր, եռաշարի,  
խաչածեւ, բնդարձակ պարտէզով մը: Կը պա-  
րունակէր 40 լուսաւոր սենեակներ, 120 մահ-  
ձակալներով: Իր յարակից շինութիւններէն  
գատ, սեղանատուն, վիրաբուժարան, սպասա-  
ւորներու յատուկ սենեակներ, բաղնիք, մա-  
սան, խոհանոց, տեսչարան, եւլն.: Աջակողմը  
ունէր իրեն յատուկ մասնաւոր մատուց մը,  
ինչպէս եւ Յիմարանոցի եւ Անկեղանոցի առան-  
ձին բաժիններ:

Մատուտին զիմացը՝ լայն բակին միւս ծայ-  
րը, կը բարձրանային Ս. Լուսաւորիչ Հիւան-  
դանոցը վերաշինող եւ մատուցը նորոգող զոյգ  
բարերար Սպարթալեան եղբայրներու մարմա-  
րէ մահարձանները, կրանիթեայ քառակուսի  
բարձրադիր պատուանդաններու վրայ: Զմիւս-  
նահանգութեան ամէն տարի, Ս. Ծննդեան առա-  
ջին կիրակին, հիւանդանոցի բացման տարե-  
դարձին առթիւ, շքեղ հանդէս մը կը սարքէր,  
փառաւորելու համար անոնց յիշատակը:

Ազգային հիւանդանոցի զլիաւոր բժիշկնե-  
րու շարքին կը յիշուին վիրաբույժ՝ Տօֆթ. Տիգ-  
րան Սպարթալի, Տօֆթ. Կոստանդ, Տօֆթ. Փեշ-



Տօֆթ. ՏԻԳՐԱՆ Յ. ՍՊԱՐԹԱԼԻ  
Վիրաբույժ՝  
Փարիզի Բժշկական համալսարանէն



Զմիւսնիոյ հայ եւ օտար շրջանակներէ  
յարգուած  
Տօֆթ. Պ. ԿՈՍՏԱՆԳ

տիմակեան, Տօֆթ ձէլէպեան, Տօֆթ. Սիմոն  
Սպարթալը, Տօֆթ. հաչատուրեան, եւլն.:

Սնամակարուհիներէն յիշատակութեան ար-  
ժանի են Սպարթալեաններ, Տօֆթ. ձէլէպեան,  
Յովհ. Գալուստեան; Գէորգ Քէշիշեան, Եփրեմ  
Գասպարեան, Վաղարշակ Ոսկանեան, Յովհ.  
Բաբազեան, Նազարէք Զամկազեան, Մագ-  
սուտ Պօղոսեան, Տիկին Լիւսի Շապարօֆ,  
Պերմուի Տիլսիգեան, Մարիամ ձէլէպեան,  
Սրբուհի եւ Էպրուի Աւագեաններ, Տիկ. Իս-  
ֆէնտէրեան, Գայեանէ Պատմանեան, Օր. Ա-  
րուսեակ Սարաֆեան, Մարի Սիմոնեան,  
Մ. Զմիւսնակէսեան, եւայլն:

Զմիւսնիոյ բազմաբզիւն ազգային ուսում-  
նարաններու ՊՅՅԱՃԵԱՆ (աղոց) եւ ՏԷՐ ԲԱՐ-  
ԹՈՂ (աղջկանց) Ֆրանսական վերջին մեթոտով  
զարգացնելու կողքին, կը փայլէր ՊԱԳՐՃԵԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՉԸ, ուր կը յաճա-  
խէին զրեթէ մեծ մասամբ անվճար երկսես մա-  
նուկներ:

Այդ առթիւ յիշատակութեան արժանի է  
Զմիւսնիոյ հայ մեծ բարերարներու շարքին,  
Պագրեան գերդաստանը:

1904ի բնթացքին, Ուսումնական Խորհուր-  
դին թափած ջանքերովն էր որ կարելի եղաւ  
վարձու տան մը մէջ երկսես մանուկներ հա-  
ւաքել եւ բանալ ԱԶԳ. ՄԱՆԿԱՊԱՐՏԷՉԸ: Դըժ-  
բազարար պատշաճ չէնքի մը պակասը պատ-  
ճառ կ'ըլլար որ անոնք տեղէ տեղ թափառէին:  
Դատարարակազական գործին այս թափառական  
վիճակին ի տես՝ 1908ին, Պետրոս Պագրեան  
բարեսէր բնտանիքը ամենայն առատաձեռնու-  
թեամբ Մանկապարտէզի համար չէնք մը գնեց,





Զմիւռնիոյ վարժարանաց նպատակը եւ որո՞նք են այդ նպատակին հասնելու միջոցները»: Մ. Մամուրեան՝ «Տնտեսական գիտութեանց վրայ», «Թէ՛ հայ մանկտիւն օտար վարժարաններ յանախելով, օգո՞ւտ թէ՛ վնաս ունի ազգին», «Զմիւռնիոյ հայ հասարակութիւնը օտարաբնակ հայ հասարակութեան նկատմամբ յառաջադէ՞մ է թէ՛ յետադէ՞մ». *Էւն.*: Ատենախօսած են նաև Սրուանձտեանց, Սարգիս Պարպանեան, Գայուստ Մարկոսօֆ (Փրանսերէն լեզուով), Ազաթօն, Էւ Օրիորդ Վէստի՝ հայ կիներու բարձրութեան առջեւ, ուր, յաճախ, տեղի չդոյրութեան պատճառաւ, հաւաքոյթները տեղի կ'ունենային Հոխիսիմեան վարժարանի ընդարձակ սրահին մէջ: Հայ Ընթերցատան 25ամեայ յարելեանը կատարուած է մեծ շուքով, 1894 Փետր. 6ին: Կրթական և մշակութային տեսակէտով խիստ կարեւոր դեր կատարած է այս հիմնարկութիւնը Զմիւռնահայ պատմութեան մէջ:

ԱՆՁՆՈՒԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1873 - 1882). Հիմնուած՝ պանդուխտ և անուս ազգայնաց ուսում ջանքերու նպատակաւ: Ընկերութիւնը իր տարեկան ծախքը կը հոգար՝ անդամներու բարոյական ու նիւթական օժանդակութենէն դատ, նուիրատուութեամբ և թատերական ներկայացումներով: Կը յիշուի 1880 Յուլիս 14ին Պ. Ե. Մ. Չափրատնեան դերասանական խումբի ներկայացումը՝ ի նպատակ Ընկերութեան:

ՏԻԿՆԱՆՅ ՀՈԳԱՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879 - 1893): Սոյն օգտաւատ ընկերութիւնը մօտաւորապէս 16 տարուան բեղուն շրջան մը բոլորած է, Մելքիսեղեկ Եպս. Մուրատեանի օրով: Իր նպատակն էր Ազգ. զոյգ վարժարաններու ազգատ աշակերտութեան զգեստ և դասադիրքեր հայթայթել ինչպէս և ձեռնարկ սորվեցնել սանուհիներու: Պատրաստած է վարժուհիներ շքանոր աղջիկներէ, նորոգած է նորահասոյց Հոխիսիմեան աղջկանց վարժարանը: Իր ջանքերով նմանապէս զարդար օժտուած է զբաղարանով մը՝ սրահն նուիրատուն եղած է մեծ բարերար Թաղուր Մարթայեան: Մահակ Աւետիքեան և Տիկին Հոխիսիմէ Կոստանդեան բերած են իրենց մասնակցութիւնը:

Հոգատար Ընկերութիւնը իր կեանքի ամբողջ տեսողութեան մեծ մասնակցութիւնը ներշնչ-



ՏԻԿԻՆ ՎԱՐԴՈՒՀԻ ԶԵԼԻՆԿԻՐԵԱՆ  
Հիմնադիր-ատենապետուհի Տիկնաց Հոգատար Ընկերութեան (1879 - 1893)  
այսպէ՛ Հոգատար - Որբախնամին հետ:  
(Որբանոց աղջկանց)

չած է Զմիւռնահայ հասարակութեան, և վարձատրուած՝ անոր լիազատ և մշտապէս նրա պատաներով:

ՏԻԿՆԱՆՅ ՀՈԳԱՏԱՐ - ՈՐԲԱՆՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1893): Նախ ՈՐԲԱՆՆԱՄ ինքնին կազմուած էր 1891ին: Հիմնարկութիւնը կը պարտինք Ազգ. Հոխիսիմեանց վարժարանէն զեռանաս տասնի սաւի սանուհիներու: Երեք տարի կազմ ի կողմ նոյն իսկ պաշտօնական մարմիններու հայածանքին կ'ենթարկուի: 1893 Ապրիլ 1ին, ՏԻԿՆԱՆՅ ՀՈԳԱՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆը, զսվելի իրատեսութեամբ, որբասիրաց ձեռնարկին սատարելու մտօք՝ կը միանայ նորակազմ ՈՐԲԱՆՆԱՄին՝ ծնունդ տալով ՏԻԿՆԱՆՅ ՀՈԳԱՏԱՐ - ՈՐԲԱՆՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ: Հիմնած է որբանոց մը՝ ուր պատրաստուած էին ուրբուհիներ՝ Տաճկահայաստանի զանազան քաղաքներէն՝ Կարին, Խարբերդ, Ակն, Էվէրէկ, Արաբկիր, Աղերդ, Տիգրանակերտ և Մուշ: Իրեն նպատակ ունէր նախնական կրթութեամբ մը դաստիարակել և անոնցմէ ընդունակներն ալ ուսուցչութեան պատրաստել:

Որբանոցը՝ նախապէս ցերեկեայ, տարի մը վերջ կը վերածուի զիշերօթիկի: Այս հաստատութիւնը իր յատուկ շէնքն ունենալու բախ-

տին արժանացած է Տիկին Մ. Պալիօղեանի անուամբ:

Գործօն անդամներէն մասնաւորաբար կը յիշուին, Տէր Յարութիւն Բ. Եղիվարդեան, Աւետիս Տիվրիկեան, Օր. Լուսի Տիվրիկեան, Օր. Ազնիւ Ալթունեան, Վարդուհի Զիլինկիրեան, Եւփարիս Սվազեան, Իսկուհի Աղազարեան, Օր. Մերսետէ Զմիւռնակեան, Մարթա Պերկամալեան, Մարինա Պազրեան, Մարիամ Սիվրիսարեան, Իսկուհի Թօփալեան, Քրիստին Յակոբեան, Զապէլ Սիմոնեան, Անուհի Գուլուսեան, Մարի Սիմոնեան, Մարի Արապեան, Լիւսի Պարտիզպանեան, Էւն.:

ՀՈՒԹՈՒՄԵԱՆՅ ԿՐԹԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1881 - 1922): Առաջին հիմնադիրներ՝ Օր. Խարսիւնի Բէօլեան, Սրբուհի Չափրեան, Մարիամ Հիւսեմեան, Վերնիքա Քէշիշեան, Զապէլ Սվազեան, Վերնիք Էլմասեան, Տիրուհի Հալէպեան, Սրբուհի Գարագաշեան և Սրբուհի Ծանուսեան: Հիմնուած է կրթութիւն և ուսում տարածելու նպատակով: Կը յաջողին բաճալ իրենց մանկապարտէզը որ կ'ըլլայ Զմիւռնահայութեան առաջին հաստատութիւններէն մին՝ այս տեսակին մէջ: Բացումը կատարուած է հանդիսաւորապէս 1888 Սեպտեմբեր 12ին: Հայոց Թաղին (Կետեղերք) կեդրոնը Մանկապարտէզի փաստաւոր սեպտեմբերի շէնքը նուիրատուութիւնն էր Զմիւռնիացի Եսայեան եղբայրներուն:

Նպատակ՝ 4էն 7 տարեկան մանկանց հիմնական դաստիարակութիւն և միանգամայն ազգային վարժարաններու համար ընտիր աշակերտներ և աշակերտուհիներ պատրաստել:

Կրթասիրաց Ընկերութեան անդամուհիներու շարքին՝ Տիկին Մարիամ Վէմեանի անունը կը յիշուի:

Մանուկներու թիւը կը հասնէր մօտաւորապէս 150էն 200ի: Կրթասիրաց մանկապարտէզը ունէր անթոշակ 40 - 50 աշակերտներ որ Թրքահայաստանի այլեւայլ կողմերէն Զմիւռնիա կաղթող թշուառ բնուածներու զաւակներ էին և կը վայելէին ամէն խնամք այս օգտակար հաստատութեան մէջ:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԿՈՒՄԲ, հիմնուած՝ 1886ին Սպարթայեանի, Եսայեանի և Պալիօղեանի ջանքերով:

ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, հիմնուած՝ 1887ին: Նպատակ՝ Մեծրոպեան և Հրոխիսիմեանց վարժարաններուն փայլուն շրջանաւարտներէն երկուական հողի Եւրոպա ուղարկել ուսումի համար:

Եւրոպա ուղարկուած են առաջին անգամ կատարելագործուելու համար, օրիորդք՝ Թաղուհի Երկանեան, Վառլամէ Մկրտիչեան (Մօսկովի) և Թաղուր Միքայէլեան (Թուրուզ) ուսուցչութեան պատրաստուելու համար:

ՄԵՍՐՈՊԵԱՆ ԳՐԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, հիմնուած՝ 1891ին, որ յետոյ կոչուած էր նաև Երիտասարդաց Քրիստոնէական Միութիւն. Բացած է կիրակնօրեայ և զիշերային դասաւանդութիւններ հայ անուս և թերուս երիտասարդներու համար:

ԱՐՈՒԵՍՏԱՆՈՅ, հիմնուած՝ 1895ին, հիմնադիր Կարապետ Արապեան: Այս Միութիւնը մասնաւոր շէնք մը կատուցած է ձեռարուեստ սորվեցնելու համար Հայերուն. ունէր հիւսնութեան, թիթեղագործութեան և կոշակագործեան մասնաւոր սրահներ:

ԳԹԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1896 - 1898) հիմնուած՝ Հոխիսիմեան վարժարանի սանուհիներուն կողմէ, բարեսիրական նպատակով՝ Կազանցի և Չապի տոներուն աթիւ ազգատ աշակերտներու զգեստ և կոշիկ նուիրելու: 1897ին վարժարանի աշակերտուհիները նուագահանգէս մը կը սարքեն, ի նպատակ ազգատ սանուհիներու, որ բարոյական ու նիւթական մեծ յաջողութիւն ունեցաւ: Ի վերջոյ ընկերութեան անձուկ վիճակը կը թողու բարի վարուց տարուան մը յիշատակը:

ՆԵՐՍԷՍԵԱՆ ՈՐԲԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1897): Միշտ հայ ժողովուրդի թշուառութիւնը թեթեւցնելու առաջադրութեամբ, խումբ մը երիտասարդներ, 1897 Մարտ 30ին հիմնեցին Որբանոց մը: 10 տարուան շափ յարատեւած: Նոյն ամիսը կ'ընտրուէր ազգայիններու զուգարներով գաւառներէն կը բերուին 19 Տիգրանակերտցի որբեր: Հետզհետէ Հայաստանի զանազան քաղաքներէն բարձրագույն որբեր բերել տրուած է խնամելու և դաստիարակելու համար սոյն մարդասիրական յարկին տակ, նոյնպէս Պալիօղեանի նուիրած տան մէջ:





ՎՍԵՄ. ՋԱՐԵՀ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ  
Նախագահ Հ. Բ. Ը. Միութեան,  
և  
Հովանաւորող Յանձնախումբի անդամ

Որբասիրաց Ընկերութեան հիմնադիր անդամներ, Աւետիս Տիվրիկեան, Հայրապետ Շահում, Արմենակ Միմասեան, Թագուր Մաղաթեան, Տիրան Գասպարեան, Պետրոս Եղանեան, Ռուբէն Որբերեան, Յովհաննէս Գ. Բաբաբեան, Յովհաննէս Ս. Աւագեան, Յովհաննէս Շահինեան, Յովհաննէս Տերպետեան եւ Ստեփան Սիմոնաբեան:

Զմիւռնիացիք՝ 1908էն սկսեալ, Օսմ. Սահմանադրութեան հռչակումով, վերադարձնում են նշաններ ցույց կուտան:

ՊԱՇՏՕՆԷՒՅ ՄԻՈՒԹԻՒՆ, նպատակ՝ պաշտօնեաներու բարոյական ու նիւթական վիճակը բարւոյցել: Խուճր մը արուեստասէրներ հիմնեցին ՔՆԱՐ Ընկերութիւնը՝ երաժշտութիւնը հայաց մէջ զարգացնելու մտօք: ՈՐՍՈՐԴԱՅ ԱԿՈՒՄԲԸ որսորդութիւնը յառաջ տանելու նպատակաւ: ՈՐԲԱՆՆԱՄ ՏԻԿԻՆՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ՝ որու միակ նպատակն էր Կիլիկիոյ որբերուն եւ այրիներուն անմիջապէս օժանդակել: Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ, ՀԱՅՈՒՆԵԱՅ ԸՆ-

ԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՆ ու ՀԱՅՈՅ ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ունենան իրենց Մ. — ճիւղերը Իզմիրի մէջ, որոնց, առանց բացառութեան, ամէն զատակարարի հայեր՝ հարուստ թէ աղքատ, մեծ եւ փոքր կը մասնակցէին խանդավառութեամբ:

Ա. Ր. Տ. Ա. Ս. Ա. Հ. Մ. Ա. Ն. : —

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԶՄԻՒՌՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ, հիմնուած՝ 1922ին: Զմիւռնիոյ ազգէն անմիջապէս վերջ՝ արաստամանեան մարտերուն մէջ կը կազմակերպուի «Միացեալ Նահանգաց Զմիւռնահայ Միութիւն»ը: Նպատակ՝ աջակցել բարոյապէս եւ նիւթապէս ազգէն վերադարձող Յունաստան ապաստանած Զմիւռնիացի հայրենակիցներուն:

Կ'օժանդակէ այրիներուն, կը զատարակէ որբեր եւ Աւրանիկի մէջ շատ մը ազգէնաւ բնասնիքներ՝ ինքնարաւ վիճակի կը հասցնէ:

Միութեան կը նախադասէ Ամերիկայի Աստիճանադրական Տեղապահ՝ Գերասիմի Մամբրէ Եպիսկոպոս Գալփեան, Ատենապետ՝ Տիկին Մառի Ճիւհանջահ, Ատենապարտ՝ Գառնիկ Կարապետեան:

Վերջերս Միացեալ Նահանգներու Զմիւռնահայ Միութիւնը որդեգրած ըլլալով «ՎԵՐԱՇԻՆՈՒՅ»ի միւլտիպլի միջոցով, 1935 Նոյեմբեր 9 ամսաթիւ համակով, կը հետաքրքրուէր իմանալ, թէ այս խիստ կարեւոր ծրարի իրականացման համար, Ֆրանսայի մէջ 1934ին ծրուող առած՝ Զմիւռնիոյ եւ Նիւշաններու Հայրենակցական Վերաշինաց Միութեան Կեդր. Վարչութեան կողմէ ի՞նչպէս եւ ո՞րպիսի քայլ մը առնուած է, որպէսզի «ՆՈՐ ԶՄԻՒՌՆԱ» աւանի վերականգնման՝ ամերիկահայ Իզմիրցիներ համագործակցէին, յաւերժացնելու Խ. Հայաստանի մէջ, երբեմնի ազգային այլ մեծ ստանին անունն ու յիշատակը:

Զմիւռնահայութիւնը թէեւ ինքնին գաղութ՝ Մայր-Հայրենիքի ծոցէն փարսախներով հեռու, բարեսիրական ու կրթական, արուեստի եւ մշակոյթի յառաջդիմութեան գաղափարներով սնած՝ կրցաւ մշտական սէր ու գուրգուռով ստեղծել պատասպարելով իր մէջ եւ խնա-

մելով անձնուիրաբար գաւառացի տատապեալ պանդուխտ հայ բեկորներ: Այս առթիւ պարտականութիւն կը զգանք յիշատակելու մեր «Յուշամատեն»ին մէջ Զմիւռնահայ բարերարներու, կազմակերպիչներու անմոռանալի անունները, որոնք իրենց ազգօգուտ ձեռնարկներով սատարած են Զմիւռնահայ գաղութի վերելին:

Գծբաղդաբար, 1922ի ահաւոր փլուզումէն ազդուած՝ Իզմիրցիին ալ շատ պարզ էր որ անխուսափելիօրէն պիտի ենթարկուէր միեւնոյն դժբաղդ անկատարին: Մնայուն բնակավայրէ գուրկ՝ 14 տարիներէ ի վեր սին յոյսերով կը տարուբերի սփիւռքի մէջ: Անցեալի բարեսիրական եւ ընկերային առաքիլութեանց առաջնութիւնը շահող Իզմիրցի՞ն է որ Խ. Հայաստանի մէջ պիտի զմանայ այժմ ԿԱՌՈՒՅԱՆԵԼ ԻՐ ՓՈՔՐԻԿ ԱԻԱՆԸ:

Նորակառոյց Զմիւռնիան պիտի վերածարձէ ընդմիջտ, հինաւուրց Զմիւռնիոյ փլատակներու տակ թաղուած, մեր դարերու փառապանծ պատմութիւնը:

Եթէ ուզենք կրնանք վերակենդանացնել զանոնք:

Զմիւռնիացիք, կրթական եւ բարեսիրական ընկերութեանց կողքին ունեցած են մանաւանդ գրական եւ ուսումնական հաստատութիւններ եւ ձեռնարկներ, որոնք, իրապէս ծառայութիւն մատուցած են ՀԱՒԱՍԱՐԱՊԷՍ արեւմտեան եւ արեւելեան հայ գրականութեան զարգացման եւ ծաւալման, հայրենիքի եւ արտասահմանի հայ գաղութներուն մէջ:

Կ. Պոլսոյ եւ Թիֆլիզի կողքին, կրնանք ըսել այս վերջինէն ալ առաջ, հայ գրականութեան եւ մշակոյթի գլխաւոր կեդրոններէն մին էր նաեւ Զմիւռնիան, իր սպարաններով, իրատարակութիւններով եւ թերթերով:



ԱՆԵՏԻՐ ԱԶԱԿՑԻԼ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ

ՉՄԻՒՌՆԱՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԿԻՒԹԵՆՊԵՐԿԻ (1450) հնարած ձուլածոյ շարժուն տառերով, առաջին անգամ տպագրուած է Գերմանիոյ Մայնի քաղաքին մէջ, 1453 - 1455ին, Աստուածաշունչ մը՝ 640 թերթիկներով: Լուղովիկոս ԺԲ. զայն նկատեց «աւելի աստուածային քան մարդկային», մինչ Ֆրանսուա Ա. բոլոր տպագրիչ զբաղմանները դերձ կացուց զինուորական ծառայութենէ:

Ամենէն առաջ, Մայնիսէն տպագրութիւնը փոխադրուեցաւ Պամպլիկ, ուր, 1461ին, գերմաներէն լեզուով «Աստուածաշունչ» մը լոյս տեսաւ: 1465էն սկսեալ, տպարաններ կ'երևին Հոմբի մօտ, Վենետիկ՝ 1469ին, նոյն քաղաքին մէջ, Հայոց անդրանիկ տպագրութենէն 43 տարի առաջ: Միւսնոյն թուականին՝ Ֆրանսա ալ, Վենետիկի հետ ունեցաւ տպագրութիւնը, Սորպոնի եւ Սէն Ժազ փողոցները: Յաջորդաբար տպագրութեան գրկաբաց ասպնջականութիւն մը ցոյց տուաւ Մեց՝ 1471ին, Լիոն՝ 1473, Թուլուզ՝ 1488, եւ գրեթէ Ֆրանսայի բոլոր մեծ քաղաքները, մինչեւ 1813: ԺԲ. դարու վերջերք եւ ԺԹ. դարու սկիզբները՝ Տիւսոնները (Ֆրանսացի) աշխարհասօցակ գարձան՝ տպագրութեան մէջ ներմուծած իրենց բարեխաւածներով: Անգլիա տպագրութիւնը մուտք գործեց 1474ին, Լայպցիկ՝ 1480, Վիեննա՝ 1482, Պոլիս՝ 1483, Ամստերտամ՝ 1523, Պոլիս՝ հայկական տպագրութիւն 1567 (Արդար գոյի), Մոսկուա՝ 1564, Պերլին՝ 1578, Փեքին՝ 1603, ՉՄԻՒՌՆԻԱՆԻԱՆ՝ հայկական տպագրութիւն 1673 (Աւետիս Ղլիճեց եւ Սոգոմոն), Նիւ Եորք՝ 1693, Փեթերսպուրկ եւ Թիֆլիզ 1711, Աթէնք՝ 1830:

Հայ ազգը, դարգացումի ընդունակ, բազմապիսի կ'ստուգի, մեծ գիւտին գործադրութեան գրուելէն գրեթէ 60 տարի վերջ, իր ՏՊՈՒԱԾ ԳԻՐԲԸ ունենալու, նոյն իսկ Հոյան-

տացիէն, Ռուսէն, Ամերիկացիէն, Թուրքէն, Նորվեգիացիէն եւ կարգ մը ազգերէ առաջ, հոգ չէ թէ իր մամուլը Մայր-Հայրենիքին ծոցը չզանուէր եւ տոհմիկ տպագրութեանց նախընտաց արդիւնքները զուրկ ըլլային օգտաշատ հանդամանքէ:

Գերմանացի բազմաշխատ վարպետին շարժուն տառերուն գործադրութեան դրուելէն 60 տարի վերջ, Իտալիոյ Վենետիկ քաղաքին մէջ, ինքզինքը «Մեղապարտ» կոչող ՅԱԿՈՒՅ անուն անձ մը, առաջին անգամ, 1512 - 1513. հրատարակեց հինգ հատ հայերէն գիրք, նախակաբապետը հայկական տպագրութեան: ՊԱՐՁԱՏՈՒՄ, ՊԱՏԱՐԱԳԱՏԵՏՐ, ՈՒՐԲԱԹԱԳԻՐԲ, ՏԱՂԱՐԱՆ եւ ԱՂԹԱՐԲ: Կէս դար տեսող ժամանակամիջոց մը բոլորելէ յետոյ, Իտալիոյ քաղաքներուն մէջ տեղի ունեցած դանազան հայ տպարաններու գործունէութիւնը կը տեսնուի մասնաւորաբար Բավիա՝ 1539, Հոմբ՝ 1584, Միլան՝ 1624, Լիւպոնոյ՝ 1643 - 1702 եւ Փատուա՝ 1690:

Իտալիայէն յետոյ, երկրորդ կարգը Թուրքիոյ կուզայ, այսինքն մայրաքաղաքէն սկիզբ առնելով 1567 թուականին, երբ ԱԲԳԱՐ ԳՊԻՐ (Սենեքերիմ թոգաւորին սերունդէն) 1564ին, Հոմբ կը հասնի եւ կը փախաքի տպագրական կազմաներով Իտալիայէն անցնիլ Կ. Պոլիս: Ստեփան մինչեւ երեմիա Չելեպի (1677), գրեթէ հարիւր տասր տարուան աճագին դադար մը կը տեսնենք պոլսահայ տպագրութեան մէջ:

Ասոնցմէ մեղի շահազրկուող տպարաններու կարգին է՝ Ամստերտամի եւ Լիւպոնոյի մէջ ծագում առած հայ տպագրութիւնը, որ սկսած է 1660ին եւ շարունակուած մինչեւ 1700ի սկիզբները, ՏՊԱՐԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐԻ անունին տակ: 1676 թր-

ւականէն առջին, Չմիւսնիոյ եւ Պոլսոյ մէջ կը շարունակուի համանուն տպարանը:


Այս տպարանը Լիւպոնոյի մէջ ունեցաւ շատ մը հրատարակութիւններ 1670ին, 1691ին, 1696ին, 1697ին, իսկ 1698ին «Աշխարհագրութիւն»՝ Մ. Նորենացիի եւ այսպէս մինչեւ 1702:

Իտալիոյ Լիւպոնոյ քաղաքէն Մարսիլիա եւ անկից 1700ին, Պոլիս փոխադրուած էր յիշեալ տպարանը: Այս տպարանը կը հաստատուի արդէն ՈՍԿԱՆ Վրդ.ի տառերուն եւ պատկերներուն հրատարակութեանց նոյնութենէն: Ուրեմն ճիշդ է, որ 1676ին Չմիւսնիոյ մէջ բացուած համանուն տպարանին գործունէութիւնը, մէկ վերադուրմ եր, բազմեքալիս Ոսկան վարդապետի Լիւպոնոյի Մայր գործատան:

Այսպէս՝ Տպարան Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգսի Զօրավարի անունով տպարաններ բացուած են հինգ տարբեր տեղեր, Հոլանտա (Ամստերտամ) 1660, Իտալիա (Լիւպոնոյ, 1670-1702), Ֆրանսա (Մարսիլիա 1673), Թուրքիա (Չմիւսնիա 1676 եւ Պոլիս 1700 - 1701):

1655ին, Փիլիպպոս կաթողիկոսի վախճանումէն վերջ իր յաջորդը՝ Ջուզեպեցի Յակոբ կաթողիկոս, մեծ հոգ կը տանի տպագրութեան գործին: Աւազրութեան առարկայ կը դարձնէ Ամստերտամ բացուած տպարանը, որ էջմիածնապատկան հիմնարկութիւն մըն էր: 1656ին Եւրոպա կը զրկէ Փիլիպպոսի քարտուղար Մատթեոս Ծաւեցիին, որուն քիչ ժամանակ յետոյ կը հետեւի նաեւ Երեւանցի Ոսկան վարդապետ: Այս վերջինին բազմաբեկուն գործունէութիւնը յիշատակութեան արժանի է: Յակոբ կաթողիկոս, որ 1678ին Պոլիս եկած էր, կը վախճանի 1680ին:

Գալով Մ. Ծաւեցիին, անիկա կը մեկնի ուղղակի Վենետիկ, ուր իրեն յարմար միտուորտ մը տեղածուած շրջալով, կ'անցնի Հոմբ: Հոս նոյնպէս մշտապէս անյաջողութեան կը մատնուի: Իմացած ըլլալով սակայն, որ հայ առեւտրականներու զաղութ մը կայ Հոլանտայի մէջ, անվստահ իրեն վստահուած գործը զուրկ հանելու համար, կ'ուղղուի Ամստերտամ: Երկվիբերու տպարանին տառեր փոխադրուող Վան Տիֆին, որ 27 Նոյ. 1658ին պայմանագրով մը յանձն կ'առնէ երեք տեսակ հայ տառեր փոխադրել, Աստուածաշունչի տպագրութեան հր-



MAXUDIAN  
Տպագրաւոր դերասան  
Մ. ՄԱԿՍՈՒՏԵԱՆ

Ծնած Իզմիր: 12 տարեկանին անցնելէ վերջ Ֆրանսա ուր կը նուիրուի քատրոնի արուեստին, մրցանակներու արժանացած: Մ. Մաքսուտեան Սարա Պէրմարի հետ աշխատակցելէ վերջ, երկար տարիներ է վեր ինքզինք նուիրած է շարժանկարի արուեստին, աստիճանաբար հասնելով սկիզբէն մինչեւ այսօր, տիեզերահոյակ դերասանի մեծութեան:

մար: Ծաւեցի կը սկսի տպել Ենորհայի Յիսուս ՈՐԳԻՆ: Դժբաղդաբար գործին արդիւնքը տեսնելու փախաք շիրականանար եւ մօտալուտ մահուան կանխամտածութեամբ՝ իր մօտ կ'ուղէ տեսնել էջմիածնայ միւսաններէն Ոսկան վարդապետի Եզբայր՝ ԱԼԵՏԻՍը: Այս այնիւ հայր պայմանագրութեան շահազրկուական մասը մերժելով, տպարանը կը նուիրէ Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգսի Զօրավարի անունին:

Ծաւեցի կը վախճանի 1661 Յունուար 22ին: Իր հիմնած գործատան Մայր Անունը, յիշուեցաւ մինչեւ վերջ՝ Իտալիոյ (Լիւպոնոյ), Ֆրանսայի (Մարսիլիա) եւ Թուրքիոյ (Չմիւսնիա եւ Կ. Պոլիս) մէջ՝ յաջորդաբար իրենց տպարանական արդիւնաշատ գործունէութիւնը բոլորած բարեհաճաբա ՈՍԿԱՆԵԱՆՅ կողմէ:

1662ին Ոսկան վարդ. Ղլիճեց ուր Երեւան-





Ֆելիք ԱՂԱԶԱՐԵԱՆ

Միջազգային մեծագույն ջութակահարներէն հռչակաւոր վիրքիւօզ ու փրօֆէսէօր Ֆրանսական մամուլին ջերմ գնահատանքին արժանացած

այդ վատ պայքարէն զրուած, վերադարձան Ամսդերտամ, իսկ Համադասպեան, 1686ին վեհապետի անցաւ գործելու համար:

Մկրտիչէ վերջ, 83 տարի հայկական տարւածն գոյութիւն չէ ունեցած Չմիւսնիոյ մէջ:

1759ին, Ամսդերտամի տպարանին աշխատակիցներէն, Նալեան պատրիարքին օրով, Մահտեսի Մարկոս անուն Հայ մը տպարան մը հիմնած է Իզմիր, ուրիկ լոյս տեսած է «Մեկնութիւն ժԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ» գործը: Նոյն տպարանին մէջ տպուած են, 1762ին, Եգնիկ Կողբացիի «ԸՆԴԴԵՄ ԱՂԱՆԻՈՅ»-ը եւ 1761ին «ԵՆՈՐՀՐԴԱՏԵՏՐ»-ը մը՝ Սրբազան Պատարագի ըստ արարողութեան Եկեղեցեայս Հայաստանեայց:


ՏՊԱՐԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻՈՅ, Մալթայէն Իզմիր փոխադրուած Բողոքական միսիոնարներու տպարանն էր որ 1835ին եւ քանի մը տարի վերջ Հօլլոֆի, ապա Գ. Կրիֆֆիթի միջոցաւ հրատարակելու կ'ողողէ հաւատաստիւն զիրքերով, մեծ մասամբ աշխարհաբար: 1839ին Ամերիկացի միսիոնարներու տպարանէն լոյս կը տեսնէ ՇՏԵՄԱՐԱՆ ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԵԱՅ՝ ամսաթերթը, որ յետոյ Կրիֆֆիթ շարունակած է:

Հեղահեղ հիմնուած են նոր տպարաններ, ծանօթ՝ իրենց բազմաթիւն հրատարակութիւններով:

ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ իր ստանձին տպարանը ունեցած է 1832 - 1840ի շրջանին:

1846ին, Թրիէսթէ բնակող Պետրոս Եւսուֆ Չելեպի, վարժարանին կը նուիրէ տպարան մը, ուր կը տպուին՝ ՀԵԳԵՐԷՆ, ՍԱՂՄՈՍ, ՆԱՐԵԿ, ՔԵՐԱԿԱՆ, ԿՈՐԻՒՆ եւ ընթերցանութեան դասագրքեր: 1841ին, հոս լոյս տեսաւ, մեծանուն վարժապետ-քահանայ Միրզա Յովհան վանանդեցիի «ՈՍԿԻ ԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ»-ն: Դարձեալ հոն, 1843ին, տպուած են Ֆեներնի ԱՐԿԱԾՔԻ եւ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ մը, Գրիգոր Կոստանդեանի ծախքով: վերջին երկուքը իր թարգմանութեամբ, ինչպէս նաեւ «ԱՂԱԿԱ», թարգմանութեամբ Հայրապետ Սափարանեանի, ՍԵՆՅՈՍ 1842ին, եւ ԵՆՈՐՀՐԴԱՏԵՄՈՒԹԻՒՆՔ:

1840 Օգոստոս 10ին, Տէրվիչ Օղլու խանին մէջ, Ղուկաս Պալթագարեան կը հրատարակէ աստղին թերթը՝ «ԱՐՇԱԼՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ», (Ստեփաննոս Պապօսեանցի տպարանը): Յաջորդաբար թերթին խմբագրապետները - Եղան Մարգրիտ Պալթագարեան, Հայրապետ Սափարանեան, Նշան Միրզա եւ Յարութիւն Սրվա-



ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԵԱՆ

Բազմաթիւն տպարանատէր եւ հրատարակիչ Գործունէութեան շրջան՝ 1850 - 1868

ձեան: Տպարանը եւ ստանը 1845ի մեծ հրդեհին կը փճանան, բայց «Արշալոյս Արարատեան», ասոնց ընդմիջումի կը շարունակուի հրատարակուի: Տիրոջը մահէն վերջ, թերթը Յ. Սվաճեանի խմբագրութեամբ հրատարակուած է մինչեւ 1886:

«Արշալոյս Արարատեան»ի անունը պատկանելի կ'օթող մըն է Չմիւսնիոյ հայութեան գրասիրութեան:

1850ին, Տիգրան եւ Յարութիւն Տէտեանները՝ բազմաթիւն գրողէտ, տպագրիչ, թարգմանիչ, հրատարակիչ եւ խմբագիր, ուրիշ տպարան մը կը հիմնեն Հայոց թողին մէջ՝ քաղքենիներու օժանդակութեամբ: 1853ին սկսեալ, այս տպարանէն լոյս տեսած է, Յարութիւն Տէտեանի խմբագրութեամբ, ԱՐՓԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ օրաթերթը՝ մինչեւ Յունուար 1856: Այնուհետեւ Չմիւսնիոյ, Պոլսոյ եւ արտասահմանի գրավաճառական հրատարակները տարիներ շարունակ ողողած է բազմաթիւ հատորներով եւ Հայը մասնաւորապէս մղած վիպասիրութեան: Տպագրական այդ բեղուն գործունէութիւնը դադարած է իր մահով, 1868 Դեկտեմբեր 25ին, որ կրնանք կոչել Չմիւսնիոյ տպագրութեան ոսկեդարը: Եղբայրները, մինչեւ 1893, շարունակած են հանդուցեալին թողած տպարանը՝ լոյս ընծայելով նորագոյն հատորներ:

Տէտեաններու տպարանին մէջ հրատար-

ակուած են միջազգային հեղինակներու գործեր, ինչպէս Մոլիէր, Եփափիր, Հագար ու մէկ գիշերները, Էլն.: Հոս լոյս տեսած են նաեւ, Մ. Մանուբեանի թարգմանութեամբ, Ամուրիի մը երգերը, Անպի, Անիծեալն, Աշխարհի շրջան 80 օրուան մէջ, Գապուհի Բաքիզու, Երեմի հրացանակիրներ, Եգիշէ, Երկաւիրալ թիւնք Պարտիզանները: Եւ Միրզայեանի. 12 Կեսարաց Պատմութիւն, Իվանօէ, Բասն տարի ետք, Պրաժօն Դեքլոմս, Միքո Մեղաս եւ հայկական ու անգլիական նամակները: Հոն հրատարակուած են Գր. Մանրեանի թարգմանութիւնները, Աղբաւ երիտասարդի մը վէպը, Բարիկն յԱմերիկա, Լէօն Լէօնի, Հեալիքի երգումը, Ֆլավի (վէպեր):

Տիգրան Տէտեանի թարգմանութիւնները՝ Ագահն, եւ Ակամայ բժիշկը (Մոլիէր), Անգեղա Գանիոյի, Ժընըվիէվ, Լուքրէցիա Պորնիա, Հագար ու մէկ գիշերներ, Մոնթէ Բրիսքօ կոմս:

Գրիգոր Չիլիկիւրեանի հեռեկալ թարգմանութիւնները. Դարուս մէկ գաւախի խոստովանանքը, Թշուառները, Մաքիլտ, Մանօն Լեագօ, Մարիօն Տըլօրմի խոստովանանքը, Ռափայէլ, Օրիորդ Լաֆէթիքի, Պարոն տը Գամբ:

Գ. Պատկանեանի հեղինակութիւնները, Անուշաւան, Չաւան եւ Փանակ, Մահ Պարէտի, Պարոյր կամ Առումն Նինուէի:

Մեսրոպ Նուպարեան՝ բազմավաստակ մը՝ չալը որ հեղինակեց Ֆրանսերէն - Հայերէն աշխարհաբար մեծ ու փոքր բառարաններ, թարգմանութիւններ՝ Դատասէրք, Նօդր - Տամ Բարիգի:

Սորէն Կախուպոս Միթիթեանի գործերը՝ Արկածի Կատարիներ, Թեսալոսի Բարոյախօսութիւն, Իմացական Փիլիսոփայութիւն, Նետահար աղանի, Ուղեւորութիւն վիրապի Սիրաբայ, Տիգրեական Պարտէզ:

Թաղուր Ճերմակեանի՝ Բօլ Նաւապետը եւ Բօլիմը:

Սարգիս Տէր Գասպարեանի՝ Կիւլիվէրի ձամբորդութիւնը:

Նշան Միրզայեանի հեղինակութիւնը՝ Տօրան (վէպ):

Հ. Տէտեանի թարգմանութեամբ՝ Գաղտնիք Բարիզու (թատրերգութիւն), Հասկաբալ







ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐ

ՀԱՅՐԵՆԱՍԵՐ

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

Նախագահ Ազգ. Պատուիրակութեան, հիմնադիր Նուպարաշէնի: Նախկին Սանքրայիէ: Գիտնական, նարտարագէտ եւ ելեւմտագէտ: Հնարած է երկրագործական մեքենայ մը, որ Ֆրանսական կառավարութեան կողմէ Պատուոյ Լեգէոնի եւ Եւրոպական գանազան ցուցահանդէսներու ոսկի շքանշաններուն արժանացուցած է զինքը: Հիմնադիր եւ բարերար անդամ է Բ. Ը. Միութեան եւ ցկեանս նախագահ:

Իր մեծանուն հորը նման Պետական պաշտօնատար կոչուած՝ Եգիպտական երկաթուղիներու կազմակերպութեան պաշտօնին: Հիմնած է Աղեփասնդրիոյ Հանրակառքի, Մէնզալէի հողային շահագործութեան եւ Հելիոքոլիսի հսկայ Ընկերութիւնները: Բաժնետէր եւ տնօրէն՝ Գահիրէի Զուրերու Ընկերութեան ինչպէս նաեւ, Եգիպտոսի գլխաւոր Դրամատանց Վարչական Ժողովներուն ազդեցիկ դէմքերէն: Կառուցած՝ Գահիրէի Գալուստեան Ազգ. վարժարանի նոր շէնքը՝ 20.000 ոսկի արժողութեամբ. աջակցած է միշտ, մեծ գումարներով, հայ ուսանողներ ուղարկելու Եւրոպա եւ Ամերիկա: Իր նուիրատուութեամբ հաստատած է յատուկ հիմնադրամ մը, որու կեդրոնն է Պրիւսիա: Ուսանողներու այդ ձեռնարկին նպատակն է պատրաստել հայ ուսանողներ, որոնք պէտք է հետեւին գործնական մասնագիտութեան մը եւ յանձնառու ըլլան իրենց այդ մասնագիտութիւնը գործադրելու Հայաստանի մէջ: Ի յիշատակ իր հանգուցեալ Տիկնոջ Մառի Նուտարի, Փարիզի մէջ, շինել տուած է, Միջազգային Ուսանողներու Հիմնարկութիւններուն կողմէն Cité Universitaire, հայկական ոճով, Հայ ուսանողներու Տունը:

Այս Մեծանուն Հայր ծնած է 2 Օգոստ. 1851. Կ. Պոլիս, Մեռալ Փարիզ 1930 Յունիս 25ին:

մազան ձեռնարկներով պատկասելի յիշատակ մը թողուցած են մեր սրբելի վերաշինուող Պորհրդային Հայաստանի, ինչպէս եւ արտասահմանի ընդհանուր հայութեան անցեալ եւ ապրող սերունդներու սրտին մէջ:

նոցներու, օղնած է ամէն առթիւ, միշտ, մօտ ու թոռն տարուայ ընթացքին ոչ միայն հայ զպրութեան մշակներուն, ուսուցիչներուն, բաժնեկիցներուն եւ սրբերուն, այլ եւ իրեն զլմող ամէն հայ անհատին անխախտ:

ԶՄԻՒՌՆԻՈՅ ԵՒ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՀԱՅՐԵՆԱԿՅԱՆ ՎԵՐԱՇԻՆԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ, հիմնուած Փարիզ, 1934ին, Պորհրդային Հայաստանի մէջ ՆՈՐ ԶՄԻՒՌՆԻԱ անունին տակ փոքրիկ աւան մը շինելու նպատակով, կը վերջացնէ այս պատմական հակիրճ ու բուռն յիշուցիկ, երուսաղէմի Պատրիարք Թորոս Մրբազանի հետեւեալ խօսքերով, ուղղուած Միութեանս Վարչութեան. —

« Այսպիսի պատմական հասարակութեան մը գաւակները, որքան ալ անոգի բաղդէն գարնուած եւ ցիրուցանուած, բնականաբար պիտի չկարենային կորսնցնել իրենց ազնուական նախնիքներէն ժառանգած ազգային բարեմասնութիւնները:

« Հոգեկան այդ գեղեցիկ վիճակն է ահաւասիկ որ երեւան կուգայ այսօր ձեր մէջ, ձեր սիրտերուն վերուղղուելով դէպի ցանկալի Հայրենիքը հայութեան՝ Մայր-Հայաստան: »:

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Մեր Յուշամատենին վերջին պրակը մամուլի տակ էր արդէն երբ փրանսահայ մամուլին մէջ երեւաց հարի. Հայաստանի Ներգաղթի լիազօր Քաղաքացի Գ. Շահվերդեանի պաշտօնական հաղորդագրութիւնը, որով կը ծանուցանէր, ի մէջ այլոց, թէ 1936 տարուայ առաջին զանգումային ներգաղթը տեղի պիտի ունենար, Մարսիլիայէն, Մայիս 9ին անպայման:

Սրտի անհուն հրեւումնով մը արձանագրեցինք սոյն պատմական անկիւնաքար մը կազմող հաղորդագրութիւնը, որովհետեւ, անօրինակ խանդավառութիւն մը ստեղծելով հանդերձ թէ՛ գաղթահայութեան եւ թէ՛ փրանսահայութեան մէջ, վերջ մը կը դնէ ախարի նստանստէն վերապրող հազարաւոր հայրենակիցներու ընդվզումներուն:

Մեզ վստահ եմք որ ներգաղթի հարաւասները պիտի յաջողեն իրարու, մինչեւ որ բոլոր աշխատար հայ տարրը համախորալի իր սիրտի կորիքային Հայրենիքին մէջ:

Եւ որպէսզի այդ պատմական հաղորդա-

\* \* \*

Զմիւռնիոյ եւ Շրջ. Հայրկ. Վերաշինաց Միութեան հիմնադիր՝ Պետրոս Սիմոնեան:

Միութեանս հիմնադրութեան բարոյապէս աշխատակցած են, հայրենակիցներ՝ Տէր եւ Տիկին Յարութիւն եւ Մարի Բիլուշեան, Տօքթ. Տիգրան Յ. Սպարթալի, Խաչիկ Սիմոնեան, Միքայիլ Շահպազեան եւ Յակոբ Սիմոնեան:

Ընդհ. հասցէ. — 9bis Rue Madame-Curie. Bagneux (Seine). France

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ. — Տէսին, Լիոն, Կրէնուպը:

ՇՐՋԱՆ-ԿԵԴՐՈՆՆԵՐ. — Միացեալ Նահանգաց Զմիւռնահայ Վերաշինաց Միութիւն (Նիւ Եորք) եւ Յունաստան (Սեյնթիկ):

Մասնաճիւղերէն կը յիշուին, Տէսինի Ատենայեան Օր. Մարգրիտ ձիգմէնեան, Լիոնէն՝ Յովսէփ Իշխանեան:

գրութիւնը իր արժանի արձագանգը գտած ըլլայ, պարտականութիւն համարեցինք կարգ մը մէջըրբումներ ընել անկէ:

Պորհրդային քաղաքացիութիւն ընդունած ներգաղթողներուն ընդհ. թիւն է 1793, բայց զանազան հարկադրիչ պատճառներով 30 հողի տեղեկացուցած են որ չպիտի կրնան մեկնել, որով մեկնողներուն ընդհանուր թիւը կ'ըլլայ ներգաղթին, 1763 հողի:

Այս ներգաղթողները կը մեկնին մէկ կարաւանով եւ միեւնոյն շողենաւով յառաջիկայ 9 Մայիս 1936ին:

Վարձուած է ֆրանսական ՅԱՊՐ Ընկերութեան «Սիւնետ» ամենամեծ շողենաւը, որ ունի 14.500 թօնո տարողութիւն, օժտուած՝ երկու հազար հողի հանդատաւէտ փոխադրութեան լաւագոյն պայմաններով:

Մարսիլիայէն մինչեւ Պաթում ճամբորդութիւնը նախատեսուած է 7 - 8 օր. օդերու անդադատութեան պարապակին ամենաուշը 10 օր:

Շողենաւին մէջ պիտի բեցուին 1800 հողի տասը օրուան անհրաժեշտ սնունդը ապա-

հովող բաւարար քանակութեամբ կենսամթերք որմէ պիտի կրնան օգտուիլ նաեւ այն չբաւար ներգաղթողները, որոնք սովորական պայմաններու մէջ անգամ զիրենք բաւարարող քանակութեամբ պարէն չեն կրցած ստնել հետերնին: Երախտներու կաթիլ (խտացած: նէսթիլէ) ապահովուած է անխախտ բոլորին համար:

Ֆրանսական եւ միջնագոյնի կարմիր Թաշերը պիտի ուժեղացնեն շոգենաւի բժշկական սպասարկութիւնը թէ դեղերով եւ թէ անոց-ջապահական պաշտօնեաներով, մասնաւորապէս երախտներու խնամքին յատկացուած հիւանդապահութիւններով:

Աշխատանքի նախարարութիւնը պիտի բաժնանձնէ բոլոր շօմէօրներուն, արձանագրուած աշխատանքներու եւ անոնց ընտանիքներուն Ֆրանսայի զանազան վայրերէն մինչեւ Մարսիլիա շոգեկառքային փոխադրութեան ծախքերը:

Ներգաղթողներու եւ անոնց զոյքերու երկաթուղային, շոգենաւային եւ փոխադրական այլ միջոցներու, ինչպէս նաեւ ուսեստեղծելի

եւ այլ պէտքերու ծախքերը մեծ մասով ապահովուած են Ֆրանսական կառավարութեան կողմէ: Ժընէվի Նանսէնեան Օֆիսը եւ Հ. Բ. Ը. Միութիւնը բերած են իրենց մասնակցութիւնը: Քաղ. Դ. Շահվերդեանի պաշտօնական հաղորդագրութիւնը կուտայ բոլոր մանրամասնութիւնը այն ձեւակերպութեանց, որոնք պարտաւոր են կատարել բոլոր ներգաղթողները անխախտ, կարենալ շոգենաւ մտնելու համար որոշեալ թուականին:

Բացայայտ կերպով կ'երեւի որ հանդստաւէտութեան առաւելագոյն չափանիշը ձեռք ստնուած է, լաւագոյն պայմաններով փոխադրելու համար Ֆրանսահայ աշխատաւոր ընկերները: Մեզ կը մնայ սրտի խորքէն բարի ճանապարհ մտայթել բոլորին:

\* \* \*

Ներգաղթի Ա. կարաւանին հետ կը մեկնին, Միութեանս Ֆրանսարեակ անդամներէն, Չմիւսնիոյ եւ շրջակայից 20ի մօտ երկուսն հայրենակիցներ:

**ՄԱՐԳԱՐ ՄԻՐՁԱՅԻ ԿՏԱԿԸ**

Աղետէն տարիներ յետոյ, այսօր, ինչպէս ամէն դաղթական, Չմիւսնահայ նոր սերունդն ալ ցիրուցան՝ տարաշխարհի մէջ համակերպած է նոր կեանքին, իրեն համար ստեղծուած առաւել կամ նուազ շափով անկայուն վիճակ մը՝ բոլոր գաղութներու մէջ: Եւ ահա՝ ամենուն ալ աչքերը ուղղուած դէպի Խորհրդային Հայրենիք, ուր սկսած է վերաշինութեան մեծագոյն գործը, Մայրաքաղաքը շրջապատելով յիշատակելի անաններու հմայքով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԶՄԻՌՆԻՒՆԻԱՆ, մտաւորական ճարտարարուեստի եւ լուսաւորութեան գլխաւոր կեղրոններէն մին, Թրքահայ կեանքի մէջ ունեցաւ իր պատուոյ տեղը: Նորակառօյց աւաններու շարքին, անչունչա ՆՈՐ-ԶՄԻՌՆԻՒՆԻԱ-ի մը շինութիւնը լաւագոյն զոհողութիւնը

պիտի բլրար, ոչ միայն հայրենիքին հանդէպ, այլ, յաւերժացնելու համար «ՀԻՆ»-ը որ այնքան նպաստեց հայ մշակոյթին:

Չմիւսնիացի բարերար Մարգար Միրզայի կապը, զոր հանդուցեալին քոյրը՝ Յիկին Մարի Որբերեան, 1922ի եղեռնէն վերջ, յանձնեց Հ. Բ. Ը. Միութեան, ամէն տարի բաժնելու համար հասոյթը Յունաստան ապաստանած Չմիւսնահայ աղետեալներուն եւ կարօտեալներուն: Կարելի չէ՞ր դէթ մասամբ նկատի առնել մեր առաջադրած ծրագրին գործադրութեան համար:

Կտակ մը՝ որ արամադրուած է լաւագոյն բարեխիրական նպատակի մը այդ նպատակին դժբաղդ անկացումէն վերջ, արդեօք կրնա՞յ գտնել շատ աւելի փսեմ ու դեղեցկագոյն ուրիշ նպատակ մը քան այն՝ որով կը սատարուի Հայրենիքի վերելքին: Այսպիսի հայրենասիրական ձեռնարկ մը, ս եւ է վարձատրութիւն՝



Զմիւսնահայ օրինակելի բարերար ՄԱՐԳԱՐ ՄԻՐՁԱ 1871 - 1917  
ձիպուքի հաստատուած վաճառական Մեռաւ Փարիզ:

բարոյական թէ նիւթական՝ Մայր-Հայրենիքի հողին վրայ, որ խողաղութեան եւ ապահովութեան, ընկերային, մշակութային եւ սոսկապէս փառայեղ նուաճումներու հասցուցած՝ տասնվեցամեակը պիտի տօնէ արդ՝ նոր սերունդին մէջ եւ ընդ միշտ պիտի յիշուի զարկար:

Մեր իտէալն է եղած, որ սփիւռքի մէջ թափառական, անդալարար ուժացումի, անօթութեան ենթակայ Չմիւսնահայ աշխատաւորութիւնը ի մի համախմբուի, մէկ գաղափարի շուրջ՝ ի կատար ածելու իր դերագոյն պարտականութիւնը:

Վ Ե Ր Ձ





«ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ»ին համար զգտագործուած են հետեւեալ գրքերը .-

- 1. Հայք ի Զմիւռնիա եւ ի Շրջակայս .
- 2. Թէոդիկի Տարեցոյց (Ս . Ամատեան)
- 3. Itade sur Smyrne  
(Թաթիկեան)
- 4. Տիպ ու Տառ (Թէոդիկ) :



ՎՐԻՊԱԿ

Էջ	Տող			
8	25	հայ 18.000	կարգալ	15.000
19	2	կրկնայար-	«	կրկնայարկ
19	3	Զմիւռնիացի	«	Զմիւռնիացի
19	4	Կոստանդիւսեանի	«	Կոստանդիւսեանի
21	20	Զմիւռնահայութեան	«	
				Զմիւռնահայութիւնը
22		Թ . Պագրեանի նկարին 7րդ տողի		
		Միութեանս կարգալ՝ Միութիւնս :		



15308



Printed in France